

ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

(Նվիրվում է հայագետներ Ռաֆայել Իշխանյանի և Աշոտ Սուքիասյանի 100-ամյա հոբելյաններին. Երևան, հոկտեմբերի  
13-14, 2022թ. )

ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 2022

ՀՏԴ 811.19(082)

ԳՄԴ 81.51Գ43

Հ 300

Հրապարակման է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան  
լեզվի ինստիտուտի գիտական խորհուրդը:

Խմբագրական խորհուրդ՝

Վ.Լ. Կատվայան (նախագահ)

Ն.Ս. Սիմոնյան

Գ.Ս. Սիսիթարյան

Թ. Ա. Ասոյան

Ս. Կ. Տիոյան

Ա. Ս. Գալստյան

Հ 300 Հայերենագիտական հանրապետական գիտաժողովի  
նյութեր – Եր.: ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., - 2022.- 80 էջ

Ժողովածուում ընդգրկված են հայագետներ Ռաֆայել Իշխանյանի և Աշոտ Սուքիասյանի 100-ամյա հոբելյաններին նվիրված հանրապետական գիտաժողովում ներկայացված նյութեր: Ձեկուցումները նվիրված են ժամանակակից գրական հայերենի քերականական համակարգին (հատկապես շարահյուսությանը), բառապաշարին, առանձին բառերի ստուգաբանությանը, արևմտահայերենի պահպանության խնդիրներին:

ՀՏԴ 811.19(082)

ԳՄԴ 81.51Գ43

ISBN 978-9939-9298-5-9

© ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, 2022

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԻՇԽԱՆՅԱՆԱԿԱՆ  
ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄՆԵՐ

Ասոյան Թաթուլ

Գավառի պետական համալսարան  
ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

*Ռաֆայել Բշխանյանը հայ մշակույթի և գիտության հայտնի դեմքերից է, հասարակական-քաղաքական ակտիվ դիրքորոշում ունեցող անհատ: Լայն է նրա հետաքրքրությունների շրջանակը. պատմություն, մատենագիտություն, գրականություն, սակայն նրա ուշադրության կենտրոնում հայոց լեզուն է, նրա մաքրության ու պահպանության խնդիրները: Լեզվաբանական ուսումնասիրությունների մեջ առանձնանում է «Արդի հայերենի շարահյուսություն. պարզ նախադասություն» ուսումնասիրությունը: Այս աշխատության մեջ Ռ. Բշխանյանը յուրովի է մեկնաբանում հայերենի շարահյուսական համակարգի հանգուցային հարցերը: Հարազատ մնալով որոշ ավանդական մտեցումների՝ շատ դեպքերում լեզվական փաստերը ներկայացնում է նորովի:*

*Այս փոքրիկ հոդվածում անդրադարձել ենք շարահյուսական մի քանի իրողությունների, որոնք Ռ. Բշխանյանի կողմից այլ լուծումներ են ստացել՝ տարբերվելով մինչ այդ եղած տեսակետներից:*

Սո. Պալասանյանի երկու՝ «Ընդհանուր տեսություն արևելյան նոր գրավոր լեզվի հայոց» (1870) և «Քերականություն մայրենի լեզվի» (1874) աշխատություններով, որոնցում հեղինակն անդրադարձել է նաև շարահյուսական իրողու-

թյուններին, ըստ էության, հիմք է դրվում արևելահայերենի գիտական ուսումնասիրությանը: 150 տարվա ընթացքում արդի արևելահայերենի շարահյուսական համակարգի վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրություններ են կատարվել՝ նվիրված ինչպես կառուցվածքի ամբողջական նկարագրությանը, այնպես էլ խնդրահարույց առանձին հարցերի: Այնուամենայնիվ, պետք է ասել, որ Մ. Աբեղյանի՝ 1912 թ. լույս տեսած «Աշխարհաբարի շարահյուսություն» աշխատությունն է, որ արևելահայերենի քերականությունն ընդհանրապես և շարահյուսական կառուցվածքի ուսումնասիրությունը մասնավորապես ներկայացնում է համակողմանիորեն և համակարգված, ինքնին և զերծ գրաբարի ու այլ լեզուների ազդեցություններից: Հայերենի շարահյուսական իրողությունների վերաբերյալ արեղյանական դիտարկումները հիմնականում դիմացան ժամանակի քննությանը, սակայն հետագայում շատ հարցեր վերանայվեցին, նորովի ներկայացվեցին ու մեկնաբանվեցին: Արդի արևելահայերենի շարահյուսության ուսումնասիրության բնագավառում մեծ է նաև Ս. Աբրահամյանի ավանդը:

Փաստ է, որ ավելի հանգամանորեն ներկայացվել է պարզ նախադասությունը: Նրա ուսումնասիրությամբ զբաղվել է նաև Ռաֆայել Իշխանյանը, որի շարահյուսագիտական պատկերացումները ներկայացված են «Արդի հայերենի շարահյուսություն. պարզ նախադասություն» աշխատության մեջ (1986): Լեզվաբանը իր ուսումնասիրության ընթացքում նկատի է ունեցել երկու հանգամանք. 1. ապահովել աշխատանքի գիտականությունը՝ ջանալով հնարավորին չափ հա-

վատարիմ մնալ հայ քերականագիտության մեջ ավանդական համարվող մի շարք դրույթների, բայց երբ երևույթի ճշգրիտ նկարագրմանը ավանդույթը լրջորեն է խոչընդոտել, փորձել է այն ներկայացնել առանց ավանդականին կառչելու, 2. հաշվի առնել նյութի մատուցման մանկավարժական տեսանկյունը<sup>1</sup>: «Մի լեզվի շարահյուսական կառուցվածքի նկարագրությունը պետք է ոչ միայն գիտականորեն հնարավորին չափ ճշգրիտ լինի, այլև սովորողների համար առավելագույն չափով ըմբռնելի:... ուստի և մեր աշխատանքը հավասարապես հասցեագրված է թե՛ լեզվաբաններին, թե՛ հայոց լեզվի դասատուներին և թե՛ բուհերի բանասիրական հայկական բաժինների ուսանողներին», - գրում է նա<sup>2</sup>: Սա է պատճառը, որ աշխատությունը զերծ է այսպես կոչված բարդ շարադրանքից:

Գիտնականի կարծիքով՝ «հայ քերականագիտության մեջ ամենաշատ և ամենալուրջ տարակարծությունները, տարըմբռումները վերաբերում են արդի հայերենի պարզ նախադասությանը», ուստի այս աշխատությունը արժեքավոր է նաև այն առումով, որ հարուստ փաստական հիմքով ներկայացվում են ավանդական պատկերացումներին հակադրվող նոր տեսակետներ:

Կան շարահյուսական հանգուցային հարցեր, որոնք ավանդաբար միանշանակ լուծումներ չեն ստացել ու չեն ստանում՝ մնալով հավերժական քննարկումների հավերժական թեմաներ և այս կամ այն մեկնաբանությամբ ներկայաց-

---

<sup>1</sup> Տե՛ս Ռ.Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն, Երկու խոսք, Ե., 1986:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 5:

վում հայերենի շարահյուսական կառուցվածքի ուսումնասիրությանը նվիրված աշխատություններում: Ռ. Իշխանյանը ևս անդրադառնում է այդպիսի բանավիճային մի քանի հարցերի թե՛ առանձին հոդվածներում, թե՛ «Արդի հայերենի շարահյուսություն» աշխատությունում, որտեղ այլոց տեսակետները շատ հաճախ բերվում են ծանոթությունների տեսքով: Վերլուծությունների ընթացքում լեզվաբանը փորձում է գտնել «լեզվի փաստերից բխող և այդ փաստերին առավելագույն չափով համապատասխանող ճշգրտումներ ու սահմանումներ»<sup>3</sup>: Ընդ որում նպատակը ոչ թե արդեն եղած պատկերացումներն ընդունելը կամ մերժելն է, այլ տեսականորեն շարահյուսական իրողությունների առավել ընդունելի հատկանիշները պարզելը: Անդրադառնանք մի քանի այդպիսի հարցերի իշխանյանական մեկնաբանություններին:

Հայերենի շարահյուսության ուսումնասիրության ոլորտը նախադասությունն է: Բառակապակցությունները նախադասության բաղադրիչներն են, ուստի նախադասությունների ուսումնասիրությունը ներառում է նաև բառակապակցությունները: Ըստ լեզվաբանի՝ վերջիններիս առանձին ուսումնասիրությունը շատ հարցերի կրկնություն է ենթադրում, որոնք քննվում են նախադասության ուսումնասիրության դեպքում, սակայն նա պահպանում է ուսումնասիրության ավանդական ձևաչափը շատ հակիրճ տարբերակով: Բառակապակցությունը ներկայացվում է որպես երկու և ավելի բառերի քերականական կապակցություն, որ

---

<sup>3</sup> Պատմաբանասիրական հանդես, 4, Ե., 1982, էջ 177:

արտահայտում է մեկ հասկացություն և չի կարող նախադասության արժեք ունենալ: Չի ընդունվում այն տեսակետը, թե բառակապակցությունը երկու և ավելի նյութական իմաստ ունեցող բառերի քերականական կապակցություն է: Ընդ որում դիմավոր բայով կապակցությունները չի կարելի դասել բառակապակցությունների շարքը, քանի որ դրանք նախադասություններ են: Մնացած դեպքերում, ըստ լեզվաբանի, բացառություն անելը հիմնավոր չի կարող լինել. «մյուս բառերը՝ դերբայ, գոյական, ածական, թվական, մակբայ, դերանուն, կապ, ձայնարկություն կազմում են բառակապակցություններ և իմաստային կամ ձևաբանական որևէ նկատառումով նշված բառատեսակներից որևէ մեկի կազմած կապակցությունը բառակապակցությունների շարքից հանելը հիմնավորված չէ»<sup>4</sup>, - գրում է նա: Կապերով և ձայնարկություններով կազմված բառակապակցությունների լինելիությունը լեզվաբանը փաստարկում է բազմաթիվ օրինակներով և հայերենի շարահյուսական օրինաչափությունների հաշվառմամբ: Ըստ էության հարցը քննվում է որպես բառերի և ոչ թե շարահյուսական անդամների կապակցություն:

Միակազմ նախադասությունների նկարագրությունը իրականացվում է իբրև հակադրություն երկկազմ նախադասությունների: Այս հակադրությունը պայմանավորված է հայերենի արդի քերականագիտական ավանդական «ենթակաստորոգյալ երկկազմ կառուցվածքի առկայությամբ», այսինքն՝ միակազմ կամ երկկազմ բնորոշումները կապված են

---

<sup>4</sup> Նույն տեղում:

ենթակայի և ստորոգյալի լինելու կամ չլինելու հետ: Ռ. Իշխանյանի կարծիքով՝ միակազմ նախադասություններում ո՛չ ենթակա կա, ո՛չ ստորոգյալ, կա միայն գերադաս անդամ, որը ո՛չ ենթակա է, ո՛չ ստորոգյալ՝ անկախ իր արտահայտության ձևից: Տրամաբանությունը պարզ է. ենթակայի առկայությունը ենթադրում է ստորոգյալի առկայություն, ստորոգյալի առկայությունը՝ ենթակայի: Դիմավոր կամ անենթակա միակազմ նախադասություններում դիմավոր բայի առկայությունը բնականաբար չի նշանակում, որ գերադաս անդամը ստորոգյալն է, մի բան, որ ընդունված է այլ լեզվաբանների կողմից<sup>5</sup>:

Հայերենի շարահյուսագիտության մեջ արծարծվել է նաև ուղիղ խնդրի հետ կապված հարցեր: Սեռի երկու՝ ուղիղ /կրող/ և ներգործող խնդիրները առկա են երկու հակադիր՝ ներգործական և կրավորական շարահյուսական կառույցներում: Ներգործական և կրավորական կառուցվածքի նախադասությունները, բովանդակային ընդհանրությամբ հանդերձ, քերականականորեն են տարբերակվում: Բազմաթիվ փաստերի վկայաբերումով լեզվաբանը ցուցադրում է ուղիղ խնդրի հատկանիշները և հանգում այն եզրակացության, որ նրա սահմանումները հնից են գալիս և սոսկ խորհրդանշական արժեք ունեն: Ուղիղ խնդրի արտահայտությունների մասին խոսելիս Ռ. Իշխանյանը անդրադառնում է անորոշ դերբայներով արտահայտված ուղիղ խնդիրներին՝ նշելով և օրինակներ բերելով, որ դրանք էլ կարող են ունենալ իրենց

---

<sup>5</sup> Տե՛ս, օրինակ, Ս. Գյուլբուդաղյան, Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Ե., 1967: Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Ե., 2010:



լրացումները: Նրա կարծիքով՝ նման կառույցներում անորոշ դերբայն ուղիղ խնդիր է, ի տարբերություն այն լեզվաբանների, որոնք ռուսերենի համաբանությամբ դրանք համարում են ստորոգյալ /օրինակ՝ շարունակում է աշխատել, սիրում է երգել և այլն/<sup>6</sup>:

Ռ. Իշխանյանը հետաքրքիր դիտարկումներ է անում նաև նախադասության անդամ հասկացության շուրջ: Նա նշում է, որ այդ հարցում հայ քերականագիտության մեջ միասնական կարծիք չկա. տարբեր մոտեցումներով նախադասության անդամներ են համարվում և՛ բառերը, և՛ բառակապակցությունները, և՛ վերջիններիս մեջ մտնող բառերը: Փորձ է արվում գտնել քիչ թե շատ ընդունելի սահմանում նախադասության անդամ հասկացության համար: Ի վերջո, ընդունում է այն մոտեցումը, որ բառակապակցությունը նույնպես կարող է դառնալ նախադասության անդամ: Սակայն կարևորը նրա մոտեցումն է եղանակավորողներին /վերաբերականներ, ձայնարկություններ/ և կոչականին նախադասության անդամներ համարելու խնդրին: Վերաբերականներն ու ձայնարկությունները նախադասության անդամներ չեն համարվում, մինչդեռ, ըստ լեզվաբանի, «նախադասության կազմի մեջ մտնող բոլոր բառերն ու բառակապակցությունները արդեն իսկ այդ նախադասության բաղկացուցիչ մասերն են կամ անդամները»<sup>7</sup>: Նա այս հանգամանքը պայմանավորում է նախադասության անդամ հասկացության վերաբերյալ հըս-

---

<sup>6</sup>Տե՛ս Վ.Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, Ե., 1958: Հայոց լեզու, մաս 2, Ե., 1975:

<sup>7</sup>Պատմաբանասիրական հանդես, 3, 1984, էջ 135:

տակություն և պատկերացումների միասնականություն չլինելու փաստով: Հայ քերականագիտության մեջ այն տեսակետը կա, որ նախադասության մեջ մտնող միավորներից մի քանիսը կարող են կապակցվել քերականորեն, մյուսները՝ իմաստով, տրամաբանորեն: Քերականական կապը համաձայնությունն է, խնդրառությունը և առդրությունը: Միավորը նախադասության անդամ է, եթե նշված կապակցման եղանակներից որևէ մեկով կապակցվում է այլ միավորի հետ: Եղանակավորողները և կոչականները դուրս են մնում այդպիսի կապակցություններից, ուստի նախադասության անդամներ չեն համարվում: Լեզվաբանը այս մոտեցումը համարում է ռուս լեզվաբանության մեջ ընդունված մոտեցման ազդեցության հետևանք, որը հետագայում վերանայվեց: «Նախադասությունը շարահյուսական առավելագույն և ամենակուռ ու նաև ամենաամբողջացված միավորն է, այն եթե մեկից ավելի բառերից է կազմված, իմաստային և քերականական-կապակցական անքակտելի ամբողջություն է», - գրում է Ռ. Իշխանյանը, ապա ավելացնում, որ նախադասությունում ցանկացած բառ կամ բառակապակցություն քերականական կապակցության մեջ է մյուս միավորների հետ<sup>8</sup>: Այսպես հիմնավորելով եղանակավորողների և կոչականի՝ նախադասության անդամ լինելու իր տեսակետը՝ փորձում է ճշտել այլ անդամների հետ կապակցման բնույթը: Քերականական տեսանկյունից քննելով կոչականի երկու տեսակներ, սրանց կապակցման բնույթը ստորոգյալի հետ՝ ի վերջո Ռ. Իշխան-

---

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 137:

յանը կոչականների կապակցման եղանակը անվանում է ընդհանրական շարահարություն. «կոչականը քերականորեն շարահարվում է նախադասության մնացած հատվածին, որի հետ կապակցված է շարահարությամբ»<sup>9</sup>: Նույն կերպ էլ լուծում է եղանակավորողների /վերաբերականների և ձայնարկությունների/ կապակցման բնույթի հարցը:

Ինչպես արդեն նշել ենք, Ռաֆայել Իշխանյանը գրեթե միշտ խիստ կարևորում է հետազոտվող նյութի մանկավարժական տեսանկյունը: Այս առումով հետաքրքիր է հետևյալ դիտարկումը. «Մանկավարժական տեսանկյունից մի լեզվի համակարգումը հաջող կարելի է համարել, ըստ երևույթին, այն դեպքում, երբ նրանում ավելի քիչ են հակասությունները և ըստ նրա՝ տվյալ լեզվի օրինաչափությունները ավելի լավ են հիշվում, դյուրին յուրացվում սովորողների կողմից»<sup>10</sup>: Ուսումնասիրման և ուսուցման նպատակով լեզվաբանները, մանկավարժները լեզուն ներկայացնում են ըստ մակարդակների, սրանք էլ ըստ մասերի, որը մանկավարժության տեսակետից նպաստում է լեզվի գիտական համակարգմանը:

Այսպիսով, մեր այս շատ ընդհանուր դիտարկումներով չեն սպառվում Ռաֆայել Իշխանյանի գիտական ինքնատիպ պատկերացումները հայերենի շարահյուսական կառուցվածքի, նրա առանձին տարրերի քերականական առանձնահատկությունների վերաբերյալ: Անհրաժեշտ է կատարել շարահյուսագիտական հայացքների ամբողջական և համակարգ-

---

<sup>9</sup> Ռ.Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն. պարզ նախադասություն, Ե., 1986, էջ 282:

<sup>10</sup> «Բանբեր Երևանի համալսարանի», 1, 1983, էջ 93:

ված ուսումնասիրություն, որովհետև անվանի լեզվաբանի ներկայացրած գիտական համակարգը հայ քերականագիտության անբաժանելի մասն է, և նրա առաջարկած լուծումները շարահյուսական տարբեր իրողությունների վերաբերյալ այսօր էլ շատ արդիական են:

**SUMMERY**  
**ISHKHANYAN'S INTERPRETATIONS**  
**OF SYNTACTIC CONCEPTIONS**  
**Asoyan Tatul**

Rafael Ishkhanyan is one of the famous figures of Armenian culture and science, an individual with an active social and political position. His range of interests is wide-history, bibliography, literature, but the focus of his attention is the Armenian language, the problems of its purity and preservation. Among the linguistic studies stands out "Syntax of Modern Armenian: Simple sentence" study. In this study R. Ishkhanyan interprets the key issues of the syntactic system of Armenian in his own way. Staying close to some traditional approaches, in many cases it presents linguistic facts in a new way.

In this small article we have referred to several syntactic realities, which were given different solutions by R. Ishkhanyan, differing from the previous opinions.

**РЕЗЮМЕ**  
**ИШХАНЯНОВСКИЕ ИНТЕРПРЕТАЦИИ**  
**СИНТАКСИЧЕСКИХ ВОСПРИЯТИЙ**

**Асоян Татул**

Рафаэль Ишханян – один из известных деятелей армянской культуры и науки, личность с активной общественной и политической позицией. Круг его интересов широк: история, библиография, литература, но в центре его внимания находится армянский язык, проблемы его чистоты и сохранения. Среди лингвистических исследований выделяется «Синтаксис современного армянского языка: Простое предложение» исследование. В этой работе Р. Ишханян по-своему интерпретирует ключевые вопросы синтаксической системы армянского языка. Оставаясь близким к некоторым традиционным подходам, во многих случаях он по-новому представляет лингвистические факты.

В этой небольшой статье мы сослались на несколько синтаксических реалий, которым Р. Ишханян дал разные решения, отличающиеся от предыдущих взглядов.

**ԱԹՈՌ, ԱՆԹԵՂ, ՅՈՈՒԵՎ ՄԻ ՔԱՆԻ ԱՅԼ ԲԱՌԵՐԻ  
ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

**Զաքարյան Հովհաննես**

«Տաթև» ԳԿՀ

hovzakaryan@yahoo.com

**Բանալի բառեր.** հայոց լեզու, հ.-ե. նախալեզու, արմատային տարբերակներ, սկզբնահնչյուն, աճական, ձայնդարձ, ածանց, փոխառություն, պատճենում:

**Ներածություն**

Հոդվածի նպատակն է **աթոռ** բաղադրյալ բառի և դրա բաղադրիչներով կազմված մի քանի այլ բառերի ստուգաբանությունը և ցույց տալը, որ դրանք հնդեվրոպական ծագման բնիկ հայերեն բառեր են: Սա կարևոր է հայերենի բառապաշարի բնիկ՝ հնդեվրոպական շերտի գիտական ուսումնասիրության ամբողջացման առումով: Ստուգաբանված կամ վերաստուգաբանված են **աթոռ** «նստոց», **աթոռոտուն** «գութանի հինգերորդ լուծը», **անթ** «թևատակ», **անթեղ** «մոխրածածկ կրակ», **անթայր** «1. կայծ, 2. փայտածուխ», **ունդ** «սերմ, պատիճավոր կուտ», **յոռի** «վատ, գեշ» բառերը: Այդ ստուգաբանություններն էլ հենց հոդվածի գլխավոր նորույթն են: Առաջարկվող ստուգաբանական վարկածները հաստատելու նպատակով կատարվել են հնչյունային, ձևային և իմաստային վերլուծություններ, ներքին ու արտաքին համեմատություններ և վերականգնումներ: Օգտագործվել են նաև բարբառային տվյալներ:

## Հետազոտության ընթացքը և արդյունքները

Բառերը ժամանակի ընթացքում երբեմն այնքան են սեղմվում ու աղավաղվում, որ այլևս չեն գիտակցվում դրանց բաղադրիչներն ու կառուցվածքը, մթագնում են ներքին ձևն ու բնիմաստը, և այդ ամենը վերականգնել հնարավոր է միայն պատմահամեմատական վերլուծությամբ: Օրինակ՝ դժվար է թվում պատկերացնելը, որ անգլ. chair /չեր/ «աթոռ» բառը առաջացել է հին հուն. Καθέδρα /կաթեդրա/ «նստոց, նստատեղ, աթոռ, գահ» բառից, որը կազմված է κατὰ «տակ, ընդ-» նախածանցից և ἔδρα «հետույք» <\*sedreh- <\*sed- «նիստ» (ՎԲԱ<sup>1</sup>, ἔδρα) արմատից: Հունարեն այդ բառը գրեթե նույն հնչողությամբ անցել է լատիներենին, հետո որպես ժառանգություն փոխանցվել է ֆրանսերենին և դարձել նախ chaire, հետո՝ chaire/շեր/, որից էլ փոխառված է անգլերեն chair-ը (ՎԲԱ, chair):

Հայերեն **աթոռ** «1. նստարան, գահ, 2. բնական պետքի աման» բառը ոչ այդ աստիճանի, բայց նույնպես այնքան է աղավաղվել իր սկզբնաձևի համեմատ, որ մինչ այժմ չի վերլուծվել և չի արժանացել հավաստի ստուգաբանության, թեև մի քանի փորձեր կարճես թե համոզիչ են թվում: Այսպես, Վինդիշմանը և Մառը կապել են հ. հուն. θρόνος «բարձր նստատեղ, գահ» բառի հետ, Պատրուբանին՝ հ.-ե. \*sed- «նրստել» արմատի հետ, Մյուլերը փոխառյալ է համարել սեմական aḏar «տեղ» արմատից կամ հ.պարսկ. gāthū «տեղ, աթոռ, գահ» բառից, Կարասը՝ շումեր. tur «բազմոց, գահավորակ»

---

<sup>1</sup> Wiktionary / <https://en.wiktionary.org/wiki> (այսուհետ՝ ՎԲԱ):

բառից և այլն, որոնք բոլորը մերժել է Հ. Աճառյանը՝ այլ առաջարկ չանելով (ՀԱԲ<sup>2</sup>, 1, 89): Գ. Ջահուկյանը սկզբնապես, ըստ Պատրուբանիի, կապել է հ.-ե. \*sed- «նստել» արմատի հետ՝ համեմատելով հուն. *έδρα* «նստուկ, նստատեղ, բազկաթոռ, աթոռ», հ.իսլ. *setr* «նստուկ, նստատեղ», հայ. *ետղ, տեղի, նիստ* (<\*sedlo-) բառերի հետ<sup>3</sup>, այնուհետև համարել է անհայտ ծագման (ՀԱԲ<sup>4</sup>, 24):

Մինչդեռ այս բառը ավանդված է 5-րդ դարից և լայնորեն տարածված է թե՛ գրական հայերենի բոլոր տարբերակներում, թե՛ բարբառներում: Նրանից կազմված են բազմաթիվ ածանցյալներ ու բարդություններ (*աթոռանալ, աթոռակ, աթոռագործ, աթոռակից, աթոռակալ, աթոռանիստ, աթոռագուրկ, թիկնաթոռ, նախաթոռ, զուգաթոռ, հակաթոռ, բազկաթոռ, ճոճաթոռ* ևն):

Պարզվում է՝ **աթոռ** բառը նախաձանցավոր է, իր բաղադրիչներով՝ մաքուր հայերեն: Կազմված է բառակազմական նույն կաղապարով, ինչ հուն. *καθέδρα*-ն: Եվ ահա թե ինչպես: Հունարենի թե՛ ձևային, թե՛ իմաստային կաղապարով **աթոռ**-ը բաղկացած է երկու բաղադրիչից՝ **աթ+ոռ**՝ «ընդ+ոռ,

---

<sup>2</sup> Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հհ. 1-4, Ե., 1971-1979 (այսուհետ՝ ՀԱԲ):

<sup>3</sup> Գ. Джаукян, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ե., 1967, էջ 154:

<sup>4</sup> Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010 (այսուհետ՝ ՀԱԲ)



ընդ+հետույք, հետույքատակ»<sup>5</sup>: Դրա վկայությունն է հատկապես «բնական պետքի աման» իմաստը, որ ավանդված է ոսկեդարյան գրաբարից:

Այստեղ երկրորդ բաղադրիչի խնդիրը պարզ է: Դա **ոռ** «1. հետույք, նստուկ, 2. տակ, հատակ (իրերի)» արմատն է, որը ներկայումս բառարգելի (տաբուի) է ենթարկված և բարեկիրթ խոսքում փոխարինվում է *հետույք, նստուկ, նստատեղ* և այլ հոմանիշներով: Դա բնիկ հայերեն արմատ է՝ հ.-ե. \*orsos- նախաձևից (ՀԱԲ, 3, 564, ՀՄԲ, 603)<sup>6</sup>:

Խնդրահարույց է ածանցական բաղադրիչը՝ **արթ**: Բավարար հիմքեր կան ենթադրելու, որ դա հունարեն  $\kappa\alpha\tau\acute{\alpha}$ -ի համարժեքն է և նշանակում է «տակ, ընդ-, ենթ-»: Առաջին հայացքից թվում է՝ դա հենց **ընդ-/ընտ-/ենթ-/ընթ**-նախդիր-նախաձանցի մաշված-աղավաղված ձևն է՝ **ն**-ի անկմամբ և

---

<sup>5</sup> Այս ստուգաբանությունը տարիներ առաջ հուշել է լրագրող Մարիամ Բարսեղյանը, բայց դրա հավաստիությունն ակնհայտ դարձավ միայն վերջերս՝ հունարեն  $\kappa\alpha\theta\acute{\epsilon}\delta\rho\alpha$  զուգահեռը գտնելուց հետո:

<sup>6</sup> «Աթոռ, նստելու հարմարանք» իմաստով բառերի կապը «հետույք» իմաստի հետ («հետույք > նստարան») բնական է: Հիշենք նաև  $\mu\omicron\upsilon\alpha$ .  $\sigma\tau\upsilon\lambda$ , անգլ. stool «1. աթոռ, 2. կղկղանք, արտաթորանք (հետույքից)» (< նախագերմ. \*stolaz < հ.-ե. \*sta-lo- «կանգնել») բառերը (ՎԲԱ), որոնց դեպքում իմաստային անցումը տեղի է ունեցել հակառակ ուղղությամբ («նստարան > հետույք > կղկղանք»): Խնդիրն այն է, որ նստատեղի վրայի մեծ անցքով աթոռները ծառայել են որպես փոսով զուգարանի նստոց՝ նախքան զուգարանակոնքի հայտնվելը: Դրանք անհրաժեշտ են եղել հատկապես հղիներին, ծերերին, ծանր հիվանդներին, հաշմանդամներին, որոնց համար դժվար կամ անհնար էր զուգարանի անցքի վրա տևականորեն պազելը՝ կքանստելը:

ձայնավորի **ե-ա** կամ **ը-ա**անցմամբ: Բայց հնարավոր է՝ լինի դրանց ոչ թե աղավաղումը, այլ նախաձևից կանոնավոր հնչյունափոխությանբ առաջացած միհինգերորդ տարբերակ: **Շնդ**-ինախաձևն է՝ \*անդ<\*anti- <\*ant- (ՀՄԲ, 2, 122-124)<sup>7</sup>, կամ՝ <\*h<sub>2</sub>énti<\*h<sub>2</sub>ent-(ՎԲՄ, **ante**): Սակայն հայտնի է, որ հ.-ե. \*t-ն ամենից հաճախ դարձել է **թ** հատկապես բառամիջում ու բառավերջում (հմմտ. \*sept.- > ելթն, \*bhut- > բութ, \*spent- > փոյթ նն) (ԼՔՀԼ<sup>8</sup>, 6, 524), թեև ռնգականից հետո դառնում է **դ** (\*anti- > **ընդ**, «բայց հունաբան դպրոցում՝ **ենթ**» (ԼՔՀԼ, 6, 523)): Այս **ենթ**-/**ընթ**-ը, ըստ Հ. Աճառյանի, «յունաբան հեղինակների ձեռքով յարմարեցուած է **ընդ** նախդիրից» (ՀՄԲ, 2, 26-27): Փոքր-ինչ այլ կարծիքի է Գ. Ջահուկյանը: Ըստ նրա՝ սա «**ընդ** նախդիր-նախաձանցի բարբառային տարբերակ է՝ մտցված հունաբան հեղինակների կողմից» (ՀՄԲ, 217), այսինքն՝ ոչ թե կամայական կազմություն է, այլ օրինաչափ բնիկ հ.-ե. ժառանգություն: Նույն տրամաբանությամբ կարող ենք ենթադրել նաև \*անթ-(<\*anti- <\*ant-) թերևս դարձյալ բարբառային տարբերակի հավանականություն, որի կրճատված ձևն է **աթ**-ը (ն-ի անկման համար հմմտ. *հենգնել – հեգնել, կանթ – կոթ, խանձ – խագ, կանդուկլուզ – կայթուկլուզ «մանր-մունր», ինձնից – իզնից* (խսկց.), *կնունք – կնուք* (բրբռ.)):

<sup>7</sup>Գ. Ջահուկյանը ընդ-ի «տակ» իմաստի դեպքում ենթադրել է \*ṛdhos- նախաձև (ՀՄԲ, 248), որի լիաձայն \*ondhio- տարբերակից բխեցրել է ունջ (ընջ-) «1. տակ, խորք, հատակ, արմատ, 2. գանձ» բառը (ՀՄԲ, 750):

<sup>8</sup> Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Ե., 1971 (այսուհետ՝ ԼՔՀԼ):

Ինչ վերաբերում է հայ. **աթոռ** և հուն. καθέδρα հումանիշների ծագումնաբանական փոխհարաբերությանը, ապա կարծում ենք, որ դրանք միմյանցից անկախ կազմություններ են հանրությային իմաստաբանական նույն բանաձև-կաղապարով: Որևէ մեկից մյուսի պատճենումը մ.թ. 4-5-րդ դդ. քիչ հավանական է, քանի որ դրանք ըստ երևույթին ավելի հին իրողություններ են, քան վերսկսվել էին հայերենի և հունարենի անմիջական շփումները (4-րդ դարից): Համենայն դեպս հայերեն բառը իր առաջին գրավոր վկայությամբ (5-րդ դար) արդեն բավական մաշվածություն ունի՝ **\*անթոռ > աթոռ**<sup>9</sup>: Նաև կարելի է պնդել, որ դա գրային ճանապարհով կատարված պատճենում չէ, այլ ինքնաբուխ ժողովրդական կազմություն է. դրա վկայությունն են այդ բառի համանունները (տե՛ս ստորև): Գուցե դրանք տրոյական պատերազմիկամ ավելի վաղ ժամանակաշրջանի(մ.թ.ա. 12-րդ դ.) հայհունական շփումների անդրադարձ են՝ որպես իմաստային ընդհանրության անկախ իրացումներ կամ նույնիսկ պատճենում որևէ մեկից մյուսը: Քիչ հավանական է նաև ակնկալելը հայերենի և հունարենի համար պատճենման ընդհանուր մի երրորդ աղբյուրի հայտնաբերում: Բայց հնարավոր է, որ նույն հանրությային բանաձևը անկախաբար իրացված լինի նաև այլ լեզուներում, որոնց կրողներն ունեցել են աթոռի մշակույթը:

---

<sup>9</sup> Գ. Ջահուկյանը կարծիք է հայտնել, թե աթոռ բառը վաղնջահայերենում (մ.թ.ա. 29-13-րդ դդ.) չի եղել (Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 264 (այսուհետ՝ ՀԼՊ ՆԺ)):

**Աթոռոտուն (աթոռակ, աթոռք, աթոռ)** «խնձորալուծ, գութանի հինգերորդ՝ վերջին՝ հետին լուծը» (Մալխ.<sup>10</sup>, 1, 14, ՀԼԲԲ<sup>11</sup>, 1, 9) բառը թվում է վերոհիշյալ **աթոռ** «նստարան» բառի ածանցյալ, սակայն իմաստային վերլուծությունը ցույց է տալիս, որ սա ինքնուրույն կազմություն է՝ **աթ-ոռ** «հետ-ոռ»՝ այսինքն՝ «լծաշարի հետևից եկող» իմաստով: Այս կազմության մեջ **աթ-** ածանցը ոչ թե «տակ», այլ «հետին, վերջի, պոչի» իմաստն ունի: Ի դեպ, **աթոռ(ակ)/աթոռք** բառը ունի նաև այլ համանուններ՝ 1. «կամավոր շաբաթապահք», 2. «արորի փայտի սեպ», 3. «պուտուկի տակը՝ ոռքը» ևն (Մալխ., ՀԼԲԲ, նույն տեղերում):

Համոզվելու համար, որ իրական է **\*անթ-** «տակ, -ենթ, -ընդ» տարբերակի գոյությունը, փնտրենք դրա այլ դրսևորումներ: Որպես այդպիսիք կարելի է դիտարկել **անթ, անթեղ, անթայր** բառերը:

**Անթ (ընթ, բբռ. օնթ, հիւնթ, անտ, անդ, հընթ)** (հետադարձ բառակազմությամբ՝ **անութ**) «1. թևատակ, կոնատակ, 2. թևատակի փոսը» (որից՝ **անթեղ** «1. թևի տակն առնել, 2. գրկել, 3. կրծքի վրա բեռնել», **անթանոց** «ոսկե լանջակամար», **ընթանոց** «գոգնոց, դաստառակ, սրբիչ») բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել: Նա որպես գլխաբառ նշել է «**անութ** կամ **անթ**»՝ ըստ երևույթին սկզբնաձև համարելով առաջինը (ՀԱԲ, 1, 207-208): Գ. Ջահուկյանը որպես գլխաբառ նշել է

---

<sup>10</sup> Ս. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հհ. 1-4, Ե., 1944-1945 (այսուհետ՝ Մալխ.):

<sup>11</sup> Հայոց լեզվի բարբառային բառարան, հհ. Ա-Է, Ե., 2001-2012 (այսուհետ՝ ՀԼԲԲ):

**անթ** (**անդ, անութ**)՝ վերջինս համարելով «համաքանական վերականգնման արդյունք»: Տվել է սեփական ստուգաբանությունն՝ **անթ**<\*ant(h)i- «անութ, թևատակ»՝ որպես հայ-բալթիական զուգաբանություն՝ համեմատելով լիտվ. *uñtis* «անութ, թևատակ, կուրծք, գիրկ», *už-añtis* «անութ, թևատակ», լատվ. *uõts, uõte* «խոռոչ, փոս, խորություն», *uz-uõts* «անութ» ձևերի հետ (ՀՄԲ, 56-57): Զուգահեռը շատ դիպուկ է: Բայց հավանական է, որ թե՛ հայերեն, թե՛ բալթիական ձևերը ծագած լինեն վերոհիշյալ նույն *h.-ե.* արմատից, որի համար ՎԲԱ-ն առաջարկում է \**h<sub>1</sub>ndʰ-ér* ձևը (ՎԲԱ, *under*), իսկ Պոկոռնին՝ \**ant-s-* ձևը (Պոկ.<sup>12</sup>, № 94) ն: Սա շատ տարածված և իմաստային բազմազան զարգացումներ ստացած *h.-ե.* արմատ է (տե՛ս ՀՄԲ, Պոկ., նույն տեղերում, Նիկ.<sup>13</sup>, \**ant-*, ՎԲԱ, \**h<sub>1</sub>ndʰi-*)<sup>14</sup>:

**Անթեղ** «մոխրի տակի կրակ, մոխրածածկ կրակ, կրակախառն մոխրակույտ, տաք մոխիր» (որից՝ **անթեղել** «կրակը մոխրի տակ թաղել», **անթեղոց (անթոց, անթրոց)** «կրակախառնիչ») բառը Հ. Աճառյանը համարել է փոխառություն կովկասյան լեզուներից, մասնավորապես վրացերենից: Նա պատահական է համարել նմանությունը հունարեն մի քանի բառերի, այդ թվում՝ *ἄνθρακία* «անթեղ»-ի հետ, որից փոխառ-

<sup>12</sup>J.Pokorny, *Indogermanisches etymologisches Wörterbuch*. Bern-München, 1959. — <http://dnghu.org/indoeuropean.html> (այսուհետ՝ Պոկ.):

<sup>13</sup>S.Nikolaev, *Database of Indo-European etymology*. — <http://starling.-rinet.ru/cgi-bin/response.cgi?root=config&morpho=0&basename=\data\ie\piet&first> (այսուհետ՝ Նիկ.):

<sup>14</sup> ՎԲԱ-ն *h.-ե.* \**h<sub>1</sub>ndʰi-* արմատի համար հավանական է համարել \**h<sub>1</sub>mí-* «ցած, ներքև» + \**dʰe-* «տեղանիշ մասնիկ» կազմությունը (ՎԲԱ, \**h<sub>1</sub>ndʰi-*):

ված է համարվում վրաց. *անթրակի* բառը (ՀԱԲ, 1, 194):  
 Հ. Մարտիրոսյանը հնարավոր է համարել ենթաշերտային  
 \*ant<sup>h</sup>- արմատից ծագումը (\*-խաճանցով) **անթրոց**, **անթայր** և  
 հուն. ἄνθραξ «փայտածուխ» բառերի հետ միասին (Մարտ.<sup>15</sup>,  
 85): Գ. Ջահուկյանը երեք հնարավոր տարբերակ է ենթադրել.  
 1. **ան-** «ոչ ժխտական նախածանց» + **թեղ** «ղեզ, շեղջ, կույտ», 2.  
 բրբռ. *անթայր* «կայծ», հուն. ἄνθραξ «ածուխ» և իւեթ. ant «տաք»  
 բառերի հետ միասին՝ հ.-ե. \*anth-<sup>o</sup> արմատից<sup>16</sup>, 3. կապ՝ վրաց.  
 anteba «կրակ վառել, հրահրել, բորբոքել» բառի հետ (ՀԱԲ, 57):  
 Վերջին դեպքի համար Գ. Ջահուկյանը չի ճրջտել հայ. և  
 վրաց. ձևերի ծագումնաբանական հարաբերությունը, համե-  
 նայն դեպս համաձայն է Հ. Աճառյանի կարծիքին: Առաջին  
 դեպքը կարելի էր քննարկել, սակայն անբացատրելի կմնար  
 ակնհայտ կապը երկրորդ դեպքում բերված գուգահեռների  
 հետ (*անթայր*, ἄνθραξ, ant): Ավելի հավանական է հենց երկ-  
 րորդ դեպքը, որտեղ, սակայն, տրված նախաձևի համար ի-  
 մաստ նշված չէ: Այդ իմաստը տրված է ՀԼՊ ՆԺ-ում (էջ 157-  
 158)՝ «տակ, -ենթ, -ընդ» (դա առավել հիմնավորվում է հա-  
 ջորդ՝ *անթայր* բառի վերլուծությամբ): Ուստի առաջարկում  
 ենք **անթ-եղ** <\*ant- (կամ \*h.nd<sup>h</sup>i-) «տակ, -ենթ, -ընդ» ստու-  
 գաբանությունը, որտեղ **-եղ**-ը ածանց է (**-աղ/-եղ/-իղ/-ող/-ուղ**  
 ածանցի համար հմմտ. *կենց-աղ*, *փակ-աղ-ակ*, *հօւո-աղ*, *գազ-  
 աղ* «մոխիր», *խայծ-աղ* «աղանձ», *տաշ-եղ*, *սս-եղ*, *ուղ-եղ*, *մժ*

<sup>15</sup> H. Martirosyan, Etymological dictionary of the Armenian inherited lexicon, Brill, 2008, էջ 591-592 (այսուհետ՝ Մարտ.):

<sup>16</sup> Մեկ այլ առիթով Գ. Ջահուկյանը անթեղ, անթայր բառերը բխեցրել է հ.-ե. \*anth-՝ \*ant(h)- արմատից (ՀԼՊ ՆԺ, 112):

եղ, բոկ-եղ, բաւ-եղ «խոնդուկ», տորմ-իղ, խտ-իղ, բաւ-իղ, խնծ-իղ «ցնծություն», խանձ-ող, անձ-ող «ածուխ», յ-աջ-ող, պտ-ուղ, ցնց-ուղ, խճ-ուղ, սանդ-ուղ, ած-ուղ/իս և այլն<sup>17</sup>: Իմաստային անցման համար պետք է նկատի ունենալ, որ բառերի (արմատների) նոր իմաստները հաճախ առաջանում են այդ բառերով (արմատներով) կազմված բառակապակցությունների կրճատման հետևանքով՝ որպես փոխանունության յուրատեսակ դրսևորում, այդ պատճառով էլ այդպիսի իմաստների բացատրությունները լինում են հենց այդ սկզբնաձև բառակապակցությունները կամ նույնիմաստ բարդությունները (հմմտ. հյուրանոցի համար այսինչ սենյակ > հյուրանոցի համար > *համար* «հյուրանոցի սենյակ»; բուժիչ դեղ «բուժանյութ»; թունավոր դեղ «թունավոր խոտ» > *դեղ* «բուժանյութ»; թունավոր դեղ «թունավոր խոտ» > *դեղ* «թույն»; կաթնով ապուր > *կաթնով* «կաթնապուր»; խորոված միս > խորոված «մի ճաշատեսակ» ևն): Հետևաբար պետք է ենթադրել, որ **անթեղ** բառը **անթեղ կրակ** «(մոխրի) տակի կրակ» կապակցության կրճատման արդյունք է:

**Անթայր** «1. կայծ, 2. փայտածուխ» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 1, 194): Գ. Ջահուկյանը նախ համարել է հ.-ե. \*anth-՝ \*ant(h)- արմատի ածանցյալ (ՀԼՊ ՆԺ, 112), ապա կասկածով համարել է աղավաղված փոխառություն հուն. ἄνθραξ «ածուխ» ձևից (ՀԱԲ, 57): Հ. Մարտիրոսյանը ենթադրել է **\*անթ-ար-ի** սկզբնաձև, որի համար հնարավոր է համարել ենթաշերտային ծագումը **անթեղ** և հուն. ἄνθραξ «փայտա-

<sup>17</sup> Գ. Ջահուկյանը այս ածանցը համարել է հին հիմքակազմ \*elo-, \*-olo-, \*-ilo- մասնիկներից ծագած (ՀԼՊ ՆԺ, 233):

ծուխ» բառերի հետ միասին (Մարտ., 85): **Անթեղ** բառի հետ ակնհայտ իմաստային և ձևային նմանությունը նկատի ունենալով՝ առաջարկում ենք **անթայր** <\*անթ+այր <\*ant- (կամ \*h.ndʰi-) «տակ, -ենթ, -ընդ» ստուգաբանությունը, որտեղ երկրորդ բաղադրիչը **այր**<\*ātēr- «կրակ» (ՀՄԲ, 50) արմատն է: Հետևաբար **անթայր** բարդ բառի բնիմաստը կլինի՝ «(մոխրի) տակի կրակ», գրեթե նույնը, ինչ **անթեղ** բառի հիմնական իմաստն է: Ինչ վերաբերում է հուն. ἄνθραξ բառի հետ հարաբերությանը, ապա հիշենք, որ դա համարվում է անհայտ ծագման, բայց կա ենթադրություն, որ դա միջերկրածովյան ենթաշերտային բառ է (ՎԲԱ, ἄνθραξ): Հետևաբար դրա սկզբնաղբյուրը կարող է լինել հայ. **անթայր**-ը: Կամ էլ դրանք երկուսն էլ ինքնուրույնաբար կապված են հ.-ե. \*ant- (կամ \*h.ndʰi-) «տակ, -ենթ, -ընդ» արմատի հետ:

Հնարավոր է՝ սրանց է հարում նաև **ունդ** բառը:

**Ունդ (հունդ, ունտ, հունտ)** «1. սերմ, պատիճավոր կուտ, պատիճով ծածկված պտուղ, 2. սերմացու» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀՄԲ, 3, 601): Գ. Ջահուկյանը համարել է հավաստի ստուգաբանություն չունեցող բառ (ՀՄԲ, 749-750): Նույնն է հավաստում ՎԲԱ-ն: Նկատի ունենալով, որ խոսքը ինչ-որ մի բանի (պատիճի) տակ եղածի մասին է, այսինքն՝ դարձյալ ունենք «տակ, ենթ-, ընդ-» իմաստային բաղադրիչը, առաջարկում ենք սա կապել վերոհիշյալ \*ant- (կամ \*h.ndʰi-) «տակ, -ենթ, -ընդ» նախաձևի ձայնդարձային այլ տարբերակի հետ (միջին աստիճան)՝ **ունդ** <\*ont-«տակ, -ենթ, -ընդ» (որտեղ \*o > ու անցումը հաջորդող ռնգային բաղաձայնի ազդեցությամբ է տեղի ունեցել) կամ **ունդ** <\*ondh- (հմմտ.



վերոհիշյալ **ունջ** <\*ondh-io-՝ ըստ Գ.Ջահուկյանի) ստուգաբանական բանաձևով: Չայնավորման համար այլալեզու գուգահեռներից հիշենք՝ մ.բ.գերմ. *under, unter* «տակ» (<հ.բ.գերմ. *untar* < նախագերմ. \**under*) (ՎԲԱ, **under**):

Առիթից օգտվելով՝ անդրադառնանք նաև **ոռ** արմատից ծագած, սակայն մինչ օրս գրավոր չստուգաբանված մեկ բառի:<sup>18</sup>

**Յոռի (ոռի)** «վատ, գեշ» (որից՝ **յոռանալ, յոռենալ** «վատանալ, վատասերվել, անպետքանալ», **յոռածին** «վատազգի, ստոր», **յոռեկիրթ** «անկիրթ», **յոռետես** «ամեն ինչ վատը տեսնող, վատատես» (Մալխ. 3, 415), **հոռանալ (<յոռանալ)** «1. Հարուստ կյանքից փչանալ, 2. (բսբ.) սաստիկ աճելուց պտղաբերությունը նվազել կամ անպտուղ դառնալ», հետադարձ բառակազմությամբ՝ **հոռ** (<**յոռ**) «1. լավ կերած-խմած, հանգիստ մեծացած ու սոնքացած՝ զիրացած, 2. սաստիկ աճած, փարթամ աճած», **հոռաշիվ (<յոռաշիւ)** «հոռացած՝ փարթամ աճած շիվ» (ԺՀԲԲ<sup>19</sup>, 3, 376), «բնի ստորին մասում աճած շատ

---

<sup>18</sup>Ոռ արմատով բաղադրված բազմաթիվ հին ու նոր բառեր կան (ոռագօտի, ոռագատիկ, ոռակալ, ոռաճճի, ոռաշուռտու, ոռառո, ոռասանդի, ոռասոթ, ոռատու, ոռաքեծ, ոռգոգոշ, ոռդիք, ոռեքաշ, ոռիկ, ոռծախ, ոռծեծ, ոռձիգ, ոռճան, ոռովանալ, ոռուիլ, ոռսրբիչ, ոռտիտիկ, ոռտոգ, անոռի, անոռք, անոռագլուխ, բրդոռ, կայծոռիկ (ՀԱԲ, 3, 564), ոռալեզ, ոռամատ, ոռառո, ոռապատիկ, ոռատ, ոռեկան, ոռգէտ, ոռերեց, ոռնաղ, ասեղնառո, ոռնսողս, ոռողվել, ոռսող, ոռվանք, ոռտէն, ոռք, ոռքաշ, ոռօքվել, ետոռի, մատոռել (Մալխ.) են): Բառբանային տարբերակներից են՝ օռ, յեռ, յոռ, էօռ, վէօռ, վոր, վուէռ, վըէռ, վըռ, վառ, որդ (ՀԱԲ, 3, 564):

<sup>19</sup> Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, Ե., 1969-1980 (այսուհետ՝ ԺՀԲԲ):

փարթամ անպտուղ ընձյուղ»<sup>20</sup>, **ռռամատ** «որթի կուղրակի  
 ոռքից աճած շառավիղ, որ կտրում են» (Մայլա., 3, 565)) բառը  
 (վկայված է ոսկեդարից) Հ. Աճառյանը չի ստուգաբանել՝ ըն-  
 դամենը արձանագրելով, որ առկա է **-ի** ածանց, և «բուն ար-  
 մատն է **\*յոռ**», չնայած բնագրային վկայությունների շարքում  
 նշել է, որ բառը երեք անգամ հանդիպել է **ռռի** տարբերակով,  
 որը նա սխալագրություն չի համարել և չի էլ բացատրել յ  
 սկզբնահնչյունի բացակայության պատճառը (ՀԱԲ, 3, 601):  
 Գ. Ջահուկյանը նշել է **յոռ-** (**ռռ**) արմատ և կասկածով բխեցրել  
 է հ.-ե. \*ors-`\*eres- «անբարյացակամություն» արմատից<sup>21</sup>(ՀՄԲ,  
 555): ՎԲԱ-ն **յոռի** (**ռռի**) բառը համարել է անհայտ ծագման՝  
 որպես կարծիք բերելով Գ. Ջահուկյանի ենթադրությունը՝  
 նախաձևի որոշ ճշգրտումով \*h<sub>1</sub>en-h<sub>1</sub>or(H)s-yo- (ՎԲԱ, յոռի):  
 Այս կարծիքը, սակայն, իմաստով հեռու է տանում և համոզիչ  
 չէ: Խնդիրն այն է, որ գրաբարյան **յոռի** (**ռռի**) «վատ» բառի՝ թե՛  
 ձևով, թե՛ իմաստով գրեթե նույնական՝ **ռռի** «շատ վատ, ան-  
 պետք, տհաճ, անցանկալի» գուգահեռը կա արդի խոսակցա-  
 կան հայերենում՝ որպես գոեհկաբանություն, հայիոյաբա-  
 նություն: Կա նաև դրա հոմանիշը՝ **ռռային**: Սրանց՝ **ռռ** «հե-  
 տույք» արմատից կազմված լինելը ակնհայտ է ու լիովին

<sup>20</sup> Տե՛ս Ժ. Վարդանյան, Հ. Սայադյան, Անտառագիտական և կանաչա-  
 պատման տերմինների հայերեն-ռուսերեն-անգլերեն բացատրական բա-  
 ռարան, Ե., 2008, էջ 200:

<sup>21</sup> Դա ըստ էության \*ere-s-2 (ers-, rs-, eres-), rēs-, rōs- արմատն է, որ նշա-  
 նակում է «հոսել, ընթանալ, շարժվել, հուզվել, եռալ», որի \*eresiā- ածանց-  
 յալը նշանակում է «անբարյացակամություն» (Պոկ., № 508): Դրանից են  
 ծագել ոչ միայն հեռ «հակառակություն, ոխ, կռիվ, նախանձ» (<\*hers-)  
 (ՀՄԲ, 457), այլև եռալ (<\*ers-) (ՀՄԲ, 218) բառերը:

գիտակցվում է այդ բառերը կիրառողների և ընկալողների կողմից: **Հոռի**-ն փաստորեն դրանց գրական մեղմասական տարբերակն է: Չարմանալի է, որ մինչ այժմ ոչ ոք չի նույնացրել հինհայերենյան **յոռի (ոռի)** և նորհայերենյան **ոռի** ձևերը: Թերևս պատճառն այն է, որ **հոռի (<յոռի)**-ն գործածվում է առավելապես փոխաբերական իմաստներով: Ուղիղ և փոխաբերական իմաստների համատեղումը լավ երևում է **հոռաշիվ** և **ոռամատ** հոմանիշների գուգահեռ գործածությամբ՝ «1. վազի բնի ոռքից աճած (շիվ՝ մատ), 2. հոռացած՝ փարթամ աճած և անպտուղ ու անպետք» իմաստներով: Հայերը հնագույն ժամանակներից խաղողագործ են: Հնարավոր է՝ հենց **յոռի շիվ/մատ** «ոռքից աճած անպետք շիվ» կապակցությունից էլ հետագա փոխաբերացմամբ առաջացել է **յոռի** «1. վատ, անպետք, անպիտան, 2. անարգ, նվաստ» բառը: Դրա **ոռի** տարբերակը գրական աղբյուրներում հազվադեպ է, քանի որ ավելի անմիջաբար է ցույց տալիս կապը բառարգելի ենթարկված **ոռ** արմատի հետ: Մինչդեռ **յոռի (հոռի)** ձևը փաստորեն թե՛ սկզբից, թե՛ վերջից «քողարկված», ասես անջրպետված է իր արմատից և լռելյայն ընդունվում է որպես այլ ծագման բառ: Բայց այլևս կասկած չկա **յոռի <յ-ոռ-ի> \*ի-ոռ-ի<\*ors(os)-/\*ers** «հետույք, հետև; պոչ» ստուգաբանության ինդրում: Այստեղ ունենք **յ (<ի)** նախդիր (հմմտ. *յ-արգ-ի, յ-ն՞ր-ի, յ-ան-իրաւ-ի, յ-ոտն-կայ-ս, յ-ան-կարծ, յ-աջ-ող, յ-արձակ, յ-աճ-ախ, յ-անձն-առ-ու, յ-անց-անք, յ-արդ-ար, յ-աւել-եալ, յ-ոյժ, յ-ած-ել* ևն) և **-ի** վերջածանց (հմմտ. *բար-ի, աղ-ի, լեղ-ի, մոլ-ի, ձր-ի, գեր-ի, վայր-ի* ևն):

## Եզրակացություն

Այսպիսով ներկայացրինք հ.-ե. ծագման բնիկհայերեն մի քանի բառեր (**աթոռ**, **աթոռտուն**, **անթ**, **անթեղ**, **անթայր**, **ունդ**, **յոռի**), որոնք մեծ մասամբ մինչ այժմ համարվել են կա՛մ հավաստի ստուգաբանություն չունեցող (անհայտ ծագման), կա՛մ փոխառություն այլ լեզվից: Հնչյունային, ձևային և իմաստային վերլուծությունների հիման վրա առաջարկվել են այդ բառերի ստուգաբանության նոր վարկածներ, որոնց համաձայն՝ դրանք սերված են հ.-ե. \*ors(os)-«հետույք, հետև; պոչ» և/կամ\*ant-«տակ» արմատ(ներ)ից:

Հովհաննես Զաքարյան, բ.գ.թ., դոցենտ, «Տաթև» գիտակրթական համալիր, լեզվաբանության բաժանմունքի ղեկավար, հեռ.՝ 093817562, էլ. փոստ՝ [hovzakaryan@yahoo.com](mailto:hovzakaryan@yahoo.com)

## SUMMARY THE ETYMOLOGY OF ARMENIAN WORDS ԱԹՐՈՐ, ԱՆԹԵՂ, ՅՈՐԻ, etc. ZAKARYAN HOVHANNES

Armenian words **աթոռ**, **անթեղ**, **յոռի**, etc are not etymologized or are considered to be borrowings. The article, dwelling upon phonetic, morphemic and semantic analyses, puts forward new etymologies for them as native Armenian words of I. E. origin. They are: **աթոռ** «chair» <\*անթ-ռո<\*ant-ors- «under + buttocks», **անթ** (**անութ**) «armpit» <\*ant-«under», **անթեղ** «fire under the ashes» <**անթ**-եղ <\*ant-«under», **անթայր** «1. spark, sparkle, 2. charcoal»

<\***u**šr̥+šr̥r̥ <\*ant- (or\***h**ndʰf-) «under», **n**išr̥ «seed, grain» <\*ont- «under», **j**nr̥h̥ «bad» <j-**nr**-h̥ <\*ors «buttocks», etc.

**Key words:** Armenian, Proto-Indo-European, root variants, initial sound, determinative, vowel gradation, affix, loanword, calque.

Hovhannes Zakaryan, Candidate of Philology, Associate Professor, the Head of Linguistic Department of "Tatev" Center of Research and Education, Phone: 093817562, E-mail: [hovzakaryan@yahoo.com](mailto:hovzakaryan@yahoo.com)

### SUMMARY

#### ЭТИМОЛОГИЯ АРМЯНСКИХ СЛОВ ԱԹՈՒ,

ԱՆԹԵՂ, ՅՈՒԻ և Կ.Ը.–

#### ЗАКАРЯН ОГАНЕС

Армянские слова **աթոռ**, **անթեղ**, **յոռի** и т. д. считаются заимствованными или же не этимологизированными. В настоящей статье на основе фонетического, словообразовательного и семантического анализов предлагаются их новые этимологии, согласно которым данные слова являются исконно армянскими словами индоевропейского происхождения. Эти этимологии: **աթոռ** «chair» <\*ušr̥-**nr**<\*ant-ors- «под + ягодицы», **անթ** (**անտր̥**) «подмышка» <\*ant- «под», **անթեղ** «огонь под пеплом» <**անթ**-եղ <\*ant-«под», **անթալր** «1. искра, 2. древесный уголь» <\*ušr̥+šr̥r̥ <\*ant- (или\***h**ndʰf-) «под», **n**išr̥ «семя, зерно» <\*ont- «под», **j**nr̥h̥ «плохой, дурной» <j-**nr**-h̥ <\*ors «ягодицы» и т. д.

**Ключевые слова:** армянский язык, праиндоевропейский язык, корневые варианты, начальный звук, детерминатив, чередование, аффикс, заимствование, калька.

Оганес Закарян, к.ф.н., доцент, руководитель лингвистического отдела Научно-образовательного комплекса "Татев", тел. 093817562, эл. почта: [hovzakaryan@yahoo.com](mailto:hovzakaryan@yahoo.com)

**ՀԱՅԵՐԵՆԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԸ**

**Միքայելյան Սոնա**

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

գլխաշխատող

sonmiq20@gmail.com

**Բանալի բառեր.** Փոխառություն, փոխառությունների կատարման ժամանակագրական փուլեր, գրավոր փոխառություն, բանավոր փոխառություն, ուղղակի փոխառություն, միջնորդավորված փոխառություն:

Յուրաքանչյուր լեզվի պատմական զարգացման բոլոր փուլերում անխուսափելիորեն նրա բառապաշարի մաս են կազմում տարբեր լեզուներից կատարված փոխառությունները: Հայերենը ևս իր ձևավորման, զարգացման տարբեր փուլերում զանազան լեզուներից, այդ թվում՝ արաբերենից կատարել է փոխառություններ:

Հայերենի արաբական առաջին փոխառությունների կատարման ժամանակաշրջանի վերաբերյալ տարբեր տեսակետներ են առկա: Մասնավորապես, հայերենագիտական ավանդական դպրոցը հիմք է ընդունում հայտնի հայագետ Հ. Հյուբշմանի և մեծանուն հայ լեզվաբան Հ.Աճառյանի տեսակետները: Ըստ Հ. Հյուբշմանի՝ հայերենում արաբական առաջին փոխառությունները թվագրվում են ոչ ավելի վաղ, քան մոտավորապես 7-րդ դ. կեսով, քանի որ հայ-արաբական առաջին առնչությունները տեղի են ունեցել այդ ժամանակ:

Ընդ որում, նրա կարծիքով 7-9-րդ դդ. հայ մատենագրության մեջ արաբերեն բառերը խիստ սակավաթիվ են, հիմնականում՝ անուններ և տիտղոսներ: Միայն 12-րդ դ. սկսած՝ հատկապես թարգմանական գրականության մեջ ավելի շատ են կիրառվում արաբերեն բառեր<sup>1</sup>:

Հ. Աճառյանը, կիսելով այս տեսակետը, արաբական փոխառությունների կատարման տարածական և ժամանակագրական երկու փուլ է առանձնացնում՝ բուն Հայաստանում (7-րդ դ. կեսից 9-րդ դ.) և Կիլիկյան Հայաստանում ու Ասորիքում (12-րդ դ. սկսած)<sup>2</sup>:

Հայերենում արաբական առաջին փոխառությունների կատարման ժամանակաշրջանի վերաբերյալ առկա մեկ այլ տեսակետի համաձայն, որը ներկայացրել է լեզվաբան Ն. Մկրտչյանը, ըստ հայ և օտար պատմագիտական աղբյուրների տվյալների՝ հայ-արաբական առնչությունները շատ ավելի վաղ շրջանից են սկիզբ առնում, երբ արաբական քոչվոր ցեղերը, որոնց անվանում էին «*արաբ-տաջիկ*» («արաբ», «արագավազ»), բնակություն են հաստատել Հյուսիսային Սիրիայում և Միջագետքում<sup>3</sup>: Ուստի հայերենում առկա արաբերեն մի շարք փոխառություններ կատարվել են 7-րդ դ. ավելի վաղ:

Դասական շրջանի (5-7-րդ դդ.) հայ մատենագրության մեջ արաբերեն բառերի առկայությունը, սակայն, Հ. Հյուբշմա-

---

<sup>1</sup> Հյուբշման Հ., Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 2004, էջ 297-298:

<sup>2</sup> Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, մաս II, Եր., 2013, էջ 169-171:

<sup>3</sup> Мкртчян Н. Семитские языки и армянский, Ер., 2005, էջ 80-81:



նը հիմնավորում է որպես տվյալ գրական հաստվածների հետագայում ավելացման կամ ընդհանուր աշխատության, հատկապես, եթե այն թարգմանական բնույթի է, ավելի ուշ շրջանին պատկանելու կամ ն՛ հայերենում, ն՛ արաբերենում որպես փոխառություններ լինելու հանգամանքներով: Հակադարձ տեսակետի հիման վրա, դասական մատենագրության մեջ առկա արաբերեն ծագման բառերը պետք է համարել փոխառություն արաբերենից կամ, ավելի ստույգ, «*արաբա-ասորական կոյնեից*», որը նույն լեզվաընտանիքին պատկանող արաբերենի և ասորերենի խառնուրդից ձևավորված «միջին» լեզու էր<sup>4</sup>:

Հայերենի արաբական առաջին փոխառությունների կատարման շուրջ առկա տարակարծություններին անդրադարձել է հայ լեզվաբան Գ. Ջահուկյանը: Ակադեմիկոսը գտնում է, որ հաշվի առնելով արաբական զանազան ցեղերի առկայությունը Իրանի և Բյուզանդիայի տարբեր վայրերում 7-րդ դ. ավելի վաղ, 5-րդ դ. հայ մատենագրության մեջ առկա մի շարք բառերի հնարավոր աղբյուր կարող է լինել արաբերենը կամ «արաբա-ասորական կոյնեն»: Ի տարբերություն, սակայն, Ն. Մկրտչյանի, ով այդ բառերի թիվը համարում է երկու հարյուրյակից ավելին, Գ. Ջահուկյանն առանձնացնում է 11-ը: Դրանք են՝ *սխմախ* «հիմար», *աղխ* «ունեցվածք, ապրանք, ցեղ, ժողովուրդ», *այպն* «ամոթ, ծաղր», *ատշել* «ծարավել», *բոտոտ* «փայտի ցեց», *զունար* «գոտի», *կալատ* «միջնորդ,

---

<sup>4</sup> Пигулевская Н. В. Арабы у границ Византии и Ирана в IV-VI вв, 1964, էջ 30-32:

կավատ», *մահիճ* «անկողին», *շալակ* «պարկ» (արաբ.՝ «մուրացկանի տոպրակ»), *շառաւն* «ուղտ», *սխրանալ* «հիանալ, զարմանալ»<sup>5</sup>: Բառերի մյուս մասը, իմաստային, հնչյունական նկատառումներից ելնելով, համարում է քիչ հավանական կամ պատահական նմանության արդյունք կամ էլ՝ իրանական հավանական ծագման բառ:

Վերոնշյալ բառերից արդի գրական հայերենում կիրառվում է *մահիճ* («անկողին», արաբ.՝ mahja «ննջարան») բառից կազմված «*մահճակալ*» գոյականը, որը Գ. Ջահուկյանը համարում է նոր բաղադրություն<sup>6</sup>: Այդ շարքից *սխրանալ* «հիանալ, զարմանալ, սքանչանալ» (արաբ.՝ shr «կախարդել, հիացնել») իմաստներ ունեցող բայը մի դեպքում նշում է որպես հին արաբական փոխառություն, մյուս դեպքում՝ անհայտ ծագման հնարավոր արաբական կամ իրանական աղբյուր<sup>7</sup>: Արդի հայերենում կիրառվող նորակազմություններ են *սխրանք*, *սխրագործություն* գոյականները: Հաջորդ՝ *այպն* «ամոթ, ծաղր» («արաբ.՝ 'ayb «արատ, թերություն») արմատից կազմված *այպանել* բայը ևս կենսունակ է արդի հայերենում:

Արդի ժողովրդախոսակցական, բարբառային բառաշերտերում կենսունակ են *ախմախ*, *շալակ*, *կաւատ* բառերը: Մյուսները հնաբանություններ են:

Հաշվի առնելով արաբերենից կամ արաբա-ասորական կոյնեից ծագող սակավաթիվ փոխառությունների առկայութ-

---

<sup>5</sup> Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն: նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, 485-488:

<sup>6</sup> Ջահուկյան Գ., Մտուզաբանական բառարան, Եր., 2010, էջ 502:

<sup>7</sup> Ջահուկյան Գ., 1987, էջ 486 և Ջահուկյան Գ., 2010, էջ 683:

յունը հայերենում մինչև 7-րդ դ.՝ արաբական արշավանքները Հայաստան, արաբական փոխառությունների կատարման առաջին փուլը կարելի է համարել այս շրջանը:

Փոխառությունների կատարման առաջին փուլը, մինչդեռ, ինչպես նշել ենք, թվագրվում է 7-րդ դ. կեսից մինչև 9-րդ դ.: Սա արաբական տիրապետության շրջանն է Հայաստանում, երբ երկիրը նվաճվել էր արաբ զավթիչների կողմից: Այս շրջանում կատարված արաբական փոխառությունները, սակայն, որքանով գրավոր արձանագրվել և մեզ են հասել, սակավաթիվ են, հիմնականում՝ անուններ, տիտղոսներ, արտահայտություններ: Սա չի նշանակում, իհարկե, որ բանավոր, ժողովրդախոսակցական լեզվում դրանք չկային: Պարզապես ժամանակի գրավոր լեզուն՝ գրաբարը, պահպանելով հայերեն գրական, կանոնարկված լեզվի օրինաչափությունները, թույլ չէր տալիս, որպեսզի օտար տարրեր թափանցեին գրավոր, մատենագիտական լեզվի մեջ: Թեև, դրան զուգահեռ, բնական է, որ արաբների հետ համակեցության պայմաններում (քանի որ արաբ զավթիչները արաբական ցեղեր էին բնակեցնում Հայաստանում) խոսակցական լեզվում փոխառություններն ավելի շատ էին:

Այսինքն՝ այս շրջանում դեռևս մեծաքանակ արաբական գրական փոխառություններ հայ մատենագրության մեջ արձանագրված չէին:

Հայերենում արաբերեն փոխառությունների կատարման ժամանակագրական մյուս փուլը 11-12-րդ դդ. սկսած է, երբ հայ մատենագրության մեջ դրանց թիվը կտրուկ աճում է՝ հասնելով հարյուրների: Այս առումով հատկանշական է,

որ միջին հայերենի փոխառությունների մեծագույն մասը կազմում են արաբերեն բառերը<sup>8</sup>: Հ. Աճառյանը իր «Հայերեն արմատական բառարան»-ում ներառել է արաբերենից հայերենին անցած 702 բառ, իսկ գերմանացի ակնավոր հայագետ Ժ. Կարստը իր «Միջին հայերեն բառարան» աշխատության մեջ, որը գրվել է ավել ուշ, մատենագրական նորանոր սովյալների համալրմամբ՝ դրանց թիվը հասցրել է 1100-ի<sup>9</sup>:

Միջին հայերենում արաբերեն մեծաքանակ փոխառությունների առկայությունը կապված է երկու հիմնական հանգամանքների հետ: Գրական փոխառությունների առկայությունը պայմանավորված էր արաբական գիտության տարբեր ճյուղերի (մաթեմատիկա, աստղաբաշխություն, բժշկություն և այլն) զարգացմամբ, և ստեղծվող երկերը հայերեն թարգմանելու անհրաժեշտությամբ: Միջնադարյան Հայաստանում զարգացած էր բժշկագիտությունը, և արաբերենից բժշկագիտական տարբեր աշխատություններ էին թարգմանվում կամ թարգմանաբար հեղինակվում: Դրանցում գործածվում էին նաև բժշկագիտական արաբերեն անվանումներ՝ բուսանուններ, դեղանուններ, ախտանուններ, որոնց մի մասն ընդհանուր կիրառություն էր ստանում հասարակության կողմից, իսկ նեղ մասնագիտական բառապաշարը, սակավ գործածություն ունենալով, աստիճանաբար դուրս էր մղվում:

---

<sup>8</sup> Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Ե., 1972, էջ 199:

<sup>9</sup> Նույն տեղում:

Միջին հայերենում վկայված է արաբերենից և արաբերենի միջնորդությամբ այլ լեզուներց՝ հունարենից, լատիներենից, պարսկերենից փոխառված 320 բուսանուն, որոնց զգալի մասը, հետագա գործածությունից դուրս մղվելով, դարձել է հնաբանություն<sup>10</sup>: Օր.՝ *այրաս* «կապույտ շուշան», *հավր* «կաղամախի», *ալտու* «մատուտակ» և այլն: Մի քանի բուսանուններ կիրառվում են արդի խոսակցական հայերենում: Օր.՝ *հինա*, *նարինջ*, *բակլա*, *ռեհան*, *հաշիշ*, *պատինճան/պատնջան* և այլն: Միջին հայերենի արաբերեն փոխառությունների մեջ 118 բառ վերաբերում է բժշկագիտությանը<sup>11</sup>: Արաբերեն բառերի հետ հաճախ հայ բժիշկները գործածում էին հայերեն համարժեքները: Օր.՝ «Իսկ *սաֆրայն*, որ է դեղին մաղձ, բերե ջերմություն օր ընդ մեջ»: Բազմաթիվ են նաև ախտանունները. *թուխմա* «ստամոքսի սուր խանգարում», *սիլ* «թոքախտ» և այլն:

Բժշկական բառանունները իրենց գործածության գրեթե նույն հաճախականությունը պահպանել են միջին գրական լեզվի ողջ ընթացքում՝ Մ. Հերացու (12-րդ դ.), Գրիգորիսի (13-րդ դ.), Ա.Ամասիացի (15-րդ դ.), Ասար Սեբաստացու (16-րդ դ.) և այլ հեղինակների աշխատություններում: Բժշկական մի քանի բառեր (օր.՝ *հաբ* «դեղահատ»), պահպանվել են մինչև այսօր՝ հայերեն համարժեքների հետ զուգահեռ կիրառությամբ:

<sup>10</sup> Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Ե., 1972, էջ 199:

<sup>11</sup> Նույն տեղում:

Գրական փոխառություններից գատ, միջին հայերեն գրականությամբ վկայված են շուրջ 500 ժողովրդական փոխառություններ<sup>12</sup>, որոնց մի մասն այսօր էլ կենսունակ է հայերեն ժողովրդախոսակցական լեզվում և բարբառներում: Ի տարբերություն գրավոր (գրական) փոխառությունների, բանավոր փոխառությունների կատարման անհրաժեշտ պայման են ժողովուրդների համակեցությունը, առօրյա շփումները, որտեղ կարևորությունից զուրկ չէ նաև գերիշխանության հանգամանքը: Բռնության ենթարկված ժողովուրդը, ցավոք, ենթարկվում է նաև տիրողի լեզվական ճնշմանը: Խոսակցական լեզվին բնորոշ բառեր կարելի է գտնել միջինհայերենյան շրջանի հեղինակների՝ Ֆրիկի, Կ. Երզնկացու և այլոց երկերում: Այդ բառերի զգալի մասն այսօր էլ պահպանված է հայերենի բարբառներում՝ հնչյունական տարատեսակ, տվյալ տարածքային տարբերակին բնորոշ արտասանություններով. օրինակ՝ *հասրաթ/հասրուօթ/խասրաթ* և այլն:

Ինչպես նշել ենք, 7-9-րդ դդ. հայ մատենագրությամբ արաբերեն փոխառություններ թեև գրեթե վկայված չեն, սակայն խոսակցական հայերենը արաբերեն բառեր փոխառում էր հասկապես 8-րդ դ. վերջերից, երբ արաբ ցեղերի բնակցումը Հայաստանում բավական շատ էր: Սրանով պիտի մասամբ բացատրել նաև այն հանգամանքը, որ միջին հայերենում արաբական փոխառություններն այդքան շատ էին:

Այս շրջանում արաբերեն փոխառություններ կատարվում էին նաև կիլիկյան միջին հայերենում, քանի որ Կիլիկ-

---

<sup>12</sup> Նույն տեղում:

յան Հայաստանը Դամասկոսի և Հալեպի արաբ սուլթանությունների հարևանությամբ էր գտնվում, իսկ 1375 թ. ընկավ Եգիպտոսի արաբների լծի տակ: Կիլիկյան Հայաստանի հեղինակների՝ Ն. Շնորհալու, Վ. Այգեկցու երկերում ևս առկա են արաբերեն բազմաթիվ փոխառյալ բառեր:

Հայերենի արաբական փոխառությունների կատարման ժամանակագրական հաջորդ՝ 4-րդ փուլը 16-20-րդ դարերն են՝ Արևմտյան Հայաստանում Օսմանյան կայսրության տիրապետության ժամանակաշրջանը: Դարավոր շփումների պայմաններում օսմաներենից հայերեն բանավոր խոսք են անցել բազմաթիվ բառեր, իսկ քանի որ օսմաներենը արաբերենի, թուրքերենի ու պարսկերենի խառնուրդից ձևավորված լեզու էր, հայերենին անցել են նաև արաբերեն ծագման բառեր: Մակայն այս շրջանի փոխառությունները, ի տարբերություն ավելի վաղ շրջանում կատարվածների, առավելապես *միջնորդավորված* բնույթ ունեն, և արաբերեն ծագման շատ բառեր կրել են միջնորդ լեզվի, հետո նաև՝ հայերեն բարբառային տվյալ միավորի հնչյունական և քերականական ազդեցությունները, ենթարկվել բառիմաստային փոփոխությունների:

Հայերենում արաբերեն ծագման սակավաթիվ փոխառություններ կատարվել են նաև 20-րդ դ՝ խորհրդային շրջանում: Դրանք հիմնականում ռուսերենով միջնորդավորված բառեր են, որոնք այդ լեզվին անցել են եվրոպական լեզուներից: Օր.՝ *ադմիրալ* «ռազմածովային ծառայության բարձրագույն պաշտոնյա» (արաբ.՝ amir -al-bahr), *ալգեբրա* «մաթեմա-

տիկայի բաժին» (արաբ.՝ al-gabr), *ալկոհոլ* «թորած սպիրտ», *ալքուհլ* (արաբ.՝ al-kuhl) և այլն:

Արդի գրական հայերենում արաբերեն ծագում ունեցող փոխառությունների թիվը երեք տասնյակից ավելին է: Փոխառությունների զգալի մասը ժամանակի ընթացքում դուրս է մղվել մեր լեզվի կենսունակ բառապաշարից, թեև պետք է նշել, որ բարբառային բառաշերտում դրանք ավելի շատ են: - Մի շարք բառեր դարձել են հնաբանություններ, քանի որ կենսունակ չեն նաև դրանք անվանող առարկաներն ու երևույթները, որոշ բառեր փոխարինվել են հայերեն համարժեքներով, իսկ բառերի կամ արմատների մի փոքր խումբ, ինչպես՝ *աճպարար*, *սքանչանալ*, *ասուպ*, *մկրատ*, և այլն, նոր բաղադրություններ կազմելու և կենսունակ լինելու շնորհիվ կազմում են գրական լեզվի բաղադրիչներ:

**SUMMERY**  
**THE GENERAL CHARACTER OF ARABIC**  
**BORROWINGS IN ARMENIAN**  
**Mikayelyan Sona**

The article presents the chronological stages of the Arabic borrowings in the Armenian language, it gives the characteristics of each of them. The occurrence of Arabic borrowings, that is, how applicable they are in modern literary Armenian and in the dialectal vocabulary of Armenian, is also addressed in the article.



**Key words.** Borrowing, chronological stages of borrowings, a written borrowing, a verbal borrowing, a direct borrowing, a mediated borrowing.

**РЕЗЮМЕ**  
**ОБЩИЙ ХАРАКТЕР АРАБСКИХ ЗАИМСТВОВАНИЙ**  
**АРМЯНСКОГО ЯЗЫКА**  
**Микаелян Сона**

В статье представляются хронологические этапы арабских заимствований армянского языка, особенности каждого из них. Обсуждается также вопрос употребительности арабских заимствований, то есть по какой мере они используются в современном армянском литературном языке и в его диалектах.

**Ключевые слова:** заимствование, хронологические этапы заимствованных слов, письменное заимствование, устное заимствование, прямое заимствование, неподсредственное заимствование.

ԴԱՐՁՈՒԱԾՍՅՒՆ ՄԻԱԻՈՐՆԵՐԸ Յ. ՄՆՁՈՒՐԻԻ  
«ԱՐՄՏԱՆ» ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԷՋ

**Ս. Տիոյեան**

ՀՀ ԳԱԱ լեզուի ինստիտուտ  
աւագ գիտաշխատող  
[susannatioyan@yahoo.com](mailto:susannatioyan@yahoo.com)

**Պ. Քիլերճեան**

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ  
աւագ լապորանտ  
[bettykilerjian@gmail.com](mailto:bettykilerjian@gmail.com)

**Բանալի բառեր.** բառապաշար, բազմաբնոյթ, կայուն կապակցութիւններ, պատճառաբանել, բառարանային բնօրինակ, իմաստային կիրառութիւն, կառուցուածքային կիրառութիւն, ստեղծագործութիւն.

Դարձուածային միաւորները նախ եւ առաջ լեզուական միաւորներ են, հիմնականին կայուն կապակցութիւններ, իրենց հնչիւնական, բառային, ձեւաբանական եւ շարահիւսական դրսեւորումներով, որ բազմաբնոյթ եւ բազմաթիւ ուսումնասիրութիւններու առարկայ դարձած են<sup>1</sup>: Սակայն անոնք

---

<sup>1</sup> Ա. Սուքիասյան, 1. Հայոց լեզվի հոմանիշներու բառարան. Ե., 1967, ընդգրկում է հայերենի տարբեր փուլերին ու գործառական տարբերակներուն պատկանող շուրջ 83 հազար բառ ու դարձվածքային միավոր, որի երկրորդ լրամշակված հրատարակությունը 2003 թվականին, արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին, 2. «Արդի հայերենի դարձվածաբա-

անչափ հետաքրքիր են նաև որպես տուեալ ժողովուրդի մշակոյթի, մշակութային առանձնայատկութիւններու կրողներ: Վերջինս կենթադրէ նախ եւ առաջ կենսաձեւ՝ «հասարակական եւ բարոյական արժէքներու համակարգ, շրջակայ միջավայրի եւ աշխարհի ազգային ընկալում, հաւատալիքներ, ասանդոյթներ ու սովորոյթներ, այլեւ աշխարհագրական առանձնայատկութիւններ ու պատմութիւն... Ուստի դարձուածաբանութիւնը կը դիտուի իբրեւ լեզուի մշակութային շերտ. Այլ կերպ՝ դարձուածքները մշակոյթը արտացոլող նշաններ են»<sup>2</sup>:

Երբ մենք յանձն առինք ուսումնասիրել արեւմտահայերէնի դարձուածքները, մեր շարք մը հեղինակաւոր գործընկերներ առարկեցին թեմայի ընտրութեան առումով, պատճառաբանելով, թէ անոնք ըստ ամենայնի ուսումնասիրուած են արեւելահայերէնին մէջ, ուստի նոր բան ըսել գրեթէ անհնար է: Անոնք, անշուշտ, իրաւացի են. սակայն եթէ հաշուի առնենք վերը նշուած յանգամանքը, այն է՝ մեր ժողովուրդի երկու հատուածներու՝ տարբեր կենսական միջավայրերու ու պայմաններու մէջ ապրիլը, տարբեր աշխարհընկալում ու սովորոյթներ ունենալը, ապա պարզ կը դառնայ, որ նոյն եւ միեւնոյն դարձուածքը, գոնէ իմաստային նրբերանգներով, կը տարբերուի արեւմտահայերէնին մէջ:

---

նական բառարան» (համահ. Ս.Գալստյան), շուրջ 25 հազար միավոր, Ե., 1975:

<sup>2</sup> Ա.Հայրապետյան, Հայերեն եւ անգլերեն դարձվածքներու լեզվամշակութային քննություն, Ե., Ասողիկ, 2015, էջ 5:

Ըստուածը փաստենք օրինակով. վերցնելով կոնկրետ մէկ աշխատութիւն՝ Յ. Մնձուրիի «Արմտան» ստեղծագործութիւնը (պատմուածքներու ժողովածուն) եւ դուրս բերելով այստեղ օգտագործուած շուրջ 75 դարձուածքները, ցոյց տանք անոնց իմաստային եւ կառուցուածքային կիրառութիւնները, ընդհարութիւններն ու տարբերութիւնները իրենց իսկ բառաբանային բնօրինակներուն հետ; Իսկ թէ ինչու Ն. Մնձուրիի եւ անոր այս ստեղծագործութիւնը («Արմտան»-ը լոյս տեսած է 1966-ին), ըսենք, որ հեղինակը յայտնի է որպէս «Կարօտի գրականութեան հիմնադիրներէն եւ վառ ներկայացուցիչներէն մէկը»<sup>3</sup> եւ մեզ գրաւեց իր իւրայատուկ անկեղծութեամբ. ան պատկերած է հայրենի բնութեան մէջ իրենց ապրուստը դժուարութեամբ հայթայթող մարդոց, որոնք իրենց գործը կը կատարեն համբերատարութեամբ, հեզօրէն, ճակատագրին համակերպուած: Ունի ինքնատիպ ոճ, կ'առանձնանայ լեզուի ջերմութեամբ, անմիջականութեամբ ու գունեղութեամբ, ըստ որուն՝ գրառած է վաւերագրական հատուածներ: Պահպանած է գիւղին եւ գիւղացիին բնորոշ պարզութիւնն ու անկեղծութիւնը: Եւ քանի որ 1915-էն յետոյ գիւղի հետքը անգամ չէր մնացած (կորսնցուցած էր նաեւ ընտանիքը՝ կնոջն ու երեխաներուն), Մնձուրին վերակենդանացուցած է ծննդավայր Արմտան գիւղը՝ իր բնութեան հրաշալիքներով. իրեն յատուկ կեանքի փիլիսոփայութեամբ եւ բնորոշ ոճով յիշողութեան մէջ կը վերակենդանացնէ նաեւ իր մանկութիւնն ու երիտասարդութիւնը: Մնձուրիի լեզուն խօսակցական լեզուն է: Ան

---

<sup>3</sup> hy.wikipedia.org/wiki/Հակոբ\_Մնձուրի:

նախընտրելով ըլլալ «գիւղագիր», գերադասած է այս ոճը: Մն-  
ծուրին կը գրէ 1915-էն առաջ եղած գիւղի մասին. «Մեր տե-  
ղահանութենէն առաջ իմ գիտցածներես են, որ կը պատմեմ:  
Անկէ յետոյ ո՞վ մնաց, ի՞նչ եղաւ, չեմ գիտեր»<sup>4</sup>: Ահա այս նկա-  
տի ունենալով՝ «Արմտան»ին շատ շատերը անդրադարձած,  
ինչպէս նաեւ մենք:

Արեւմտահայերէնը հարուստ է դարձուածքներով, այն  
վկայութեամբ, որ Յակոբ Մնծուրիի «Արմտան» ստեղծագոր-  
ծութեան մէջ տեղ գտած են աւելի քան 75 դարձուածքներ: Ա-  
նոնց բնոյթը տարբեր է՝ կախուած նպատակէն. այսպէս, ըստ  
իմաստի՝ այստեղ առկայ են մենիմաստ՝

*մէջքերնին ծռել* (չարաչար աշխատիլ),

*ծունկերնին կոտրել* (կթոտել, ոտքերու ուժը թուլանալ),

*միտքս հարիւր դի կէրթայ, մէջտեղ կէլլէ* (կասկածիլ)

եւ բազմիմաստ դարձուածքներ՝

կնիկ- մարդոցը լացերէն՝ հե՞ջ *ականջոյ չհասան*, ինտո՞ր  
չարթնցար (լտուիլ. լսելի ըլլալ),

բայց ամէն մարդ զգուշացաւ *մտքէն անցածը* ըսելու (մտածել,  
միտքը գալ՝ մտաբերել),

*ճամբադ կտրող* չեղա՞ւ,- հարցուցին (մէկու առաջշարժումը,  
քայլքը կասեցնել, առաջը կտրել):

Ստեղծագործութեան մէջ կը գտնենք.

1. բառային արժէք ունեցող դարձուածքային միաւոր-  
ներ

---

<sup>4</sup> **Դարբինյան Գ.**, Արևմտահայաստանը Մնծուրու արձակում, Երևան,  
1994, էջ 28:

այնչափ ալ *ինքզինքս կը գայեմ* (պահել, բռնել),  
Ադ հէջ *խելք չըրինք*, - ըսաւ,- վա՛խ, վա՛խ, վախ... (մտածել),  
Էլմասը *ճամբու դրին*, չթողին, որ մնար, ու դրկցին վռնդել,  
քշել, հեռացնել (ճանապարհել):

2. նախադասութիւն-դարձուածքային միաւորներէն  
են՝

Աւելի *գրգռեցին ախորժակը* (գործի մը մէջ յաջողութիւններ  
ունենալով՝ նորանոր քայլերու մղել),

Կարելորը մեզի համար սերունդին շարունակութիւնը չէր, *օ-  
ճախը չմարհիլը*, մէջը մարդ ըլլալը, անունը չկորսուիլն էր (ըն-  
տանիքը, իբրեւ այդպիսին, չքանդել),

Ձեր *գլուխը կը ցաւցնեմ* (իրեն չարչարել, նեղութիւն տալ):

Բացի այդ, Յ. Մնձուրիի կիրառած դարձուածք-նախա-  
դասութիւնները կը զանազանութիւն նաեւ հնչերանգով. այս-  
պէս,

**Պատմողական** - Նայեցաւ, նայեցաւ, մեր հետը կը խօ-  
սէր, *աչքն ալ վիրա քեզի էր*, - ըսին, ու աւելցուցին Աղաճանին  
(հսկեել, հետեւիլ),

**Հարցական** - Չհարցնե՞ս տունը *ի՞նչ կայ, չկայ*, տղաքը,  
հարըջ, մարըդ (ամեն ինչ, եղած չեղած),

**Հրամայական** - *Միրտդ մի՛ հասցնէր*, Ապուշ հարսիկ,  
չարթննար (չարչարել, հոգի հանել)

**Բացականչական** - Ըմը՛ *վա՛յ առնողին գլոխին*, ատանկ  
խօսք մտիկ չընող զաւակներ են, Բարիկանց Աղջիկ (եղած  
կամ ըլլալիք Բանի համար ցաւի արտայայտութիւն է)

**Ժխտական** - **Ականջդ չհասան** (լսելի ըլլալ)

«Արմստան»-ին մէջ գործածուած դարձուածքներէն շատերը ուշադրութիւն կը դարձնեն մարդու մարմինի մասերու անուանմամբ՝ գլխաբառերով, որոնք օգտագործուած դարձուածքներու շուրջ 2/3 մասը կը կազմեն, իսկ քանի որ արեւմտահայերէնին մէջ շատ տարածուած է դարձուածքներու այս տեսակը, ուստի հարկ է անդրադառնալ անոնց: Այս դարձուածքներուն մէջ շատ կը հանդիպինք բերան, գլուխ, խելք, սիրտ, միտքը, մազ, լեզու, ոտք, ձեռք, ականջ, ակոյ, աչք, մէջք, մարմին, ծունկ, երես եւ կոպ բառերով կազմուածները: Գուցէ այս կը բացատրուի անով, որ այդ բառերով կայուն բանականացուցութիւնը աւելի հասկնալի եւ հեշտ ընկալելի ու մտապահուող է ժողովուրդի գիտակցութեան մէջ: Ստորեւ կը ներկայացնենք այդ դարձուածքները.

1. **Բերան.** բերանը կը պատռեմ, բերանը կրկրեցաւ, բերաննին բաց, բերաննուն ջուրերը կը վազէին, բերնի՞ն էր ինկեր, կախուած մնաց երիտասարդներուն բերաներէն, կնքուած բերանը.
2. **Գլուխ.** Գլխին մէջ դրաւ, գլուխը կերաւ, գլուխը կը ցաւցնեմ, դդում գլուխ, վա՛յ առնողին գլխին, քունգլուխ, երկու-երեք հոգիով գլուխ ելլուելիք բաներ չէին.
3. **Խելք.** Խելք չըրինք, խելքը առեր էին, խելքը կը պառկէ՞ր, խելքի՞ դ եկաւ, խելքս աղէկ մը տեղ կ'ընէր, խելքս գլուխս է.
4. **Միտք.** Միտք մի՛ պտտցնէր, միտքս հարիւր դի կերթայ, մտքէն անցածը, մտքերնուն չանցընեն.
5. **Սիրտ.** Սիրտ մի հատցնէր, սիրտը ուժով ուժով նետել սկսաւ.

6. **Մագ.** Մագ մը մնացեր էր, մագ մնաց, մագերը տնկուեցան.
7. **Լեզու.** Լեզուդ ալ բռնուէր է, լեզուն բռնուեցաւ, լեզունին անգամ չտկեցին.
8. **Ոտք.** Ոտք կոխեց, ոտքերս մի պլլուիք.
9. **Ձեռք.** Ձեռքերնիդ կը պագնեն, ձեռքէն բան չազատիր.
10. **Ականջ.** Ականջդ չհասան, ականջին ծոեցաւ.
11. **Ակոռայ.** Ակոռները կճրտեց, ժանիքը կախած.
12. **Աչք.** Աչքն ալ վիրա քեզի էր, չար աչք.
13. **Մէջք.** Մէջքերնին ծոել.
14. **Մարմին.** Մարմինը փուշ-փուշ եղաւ.
15. **Ծունկ.** Ծունկերնին կոտրել.
16. **Երես.** Երես դարձնէ.
17. **Կոպ.** քունը բոլորովին ծանրացաւ կոպերուն.

Սոյն աշխատութեան մէջ կը գտնենք նաեւ հետեւեալ դարձուածքները (գլխաբառերը ընդգծուած են).

**խօսք** մտիկ չընող, մէկ խօսքը երկու չէր ընէր, բարեւ բռնեց, ի՞նչ կայ չկայ, ճամբու դրին, **ճամբան** կտրեցին, ճամբադ կտրող, **կնիկը** աղէկ մը կակուղցած էր, քեզի համ ու հո՞տ պիտի տա՞ն, խօսքէս չեմ դառնար, խօսքի կը բռնենք, հասակին **գծերը** դեռ չէին արուած, **գոյնը** երեսներէն դեռ գացած չէր, վրադ կը խօսէր, **օճախը** չմարիլը, այնչափ ալ ինքզինքս կը գսպեմ, ճամբայ ելանք, ճամբան կը շտկուի, ձայնս բռնեց, գրգռեցին ախորժակը, կը թափին վրան, պարապ պահերուն, անուշութիւննին դուրս հոսեր էին, նեղու չի գար, **հացը** կը թաղէն, մէջտեղ կէլլէ, թերթեւ հոգի, ներսիդիս կը մարի...



Օգտագործուած դարձուածքներուն մօտաւորապէս կէտը տեղ գտած են Ա. Սուքիասեանի «Հայոց Լեզուի Դարձուածաբանական Բառարան»-ին մէջ<sup>5</sup>. Ինչպէս՝ *բերաննին բաց, բերաննուն ջուրերը կը վազէին, գլուխը կերաւ, գլուխը կը ցաւցնեմ, դըրում գլուխ, երկու-երեք հոգիով գլուխ ելլուելիք բաներ չէին, խելքս գլուխս է, խելքի՞ն էկաւ, խելքս աղէկ մը տեղ կընէր, սիրտդ մի հատցնէր, սիրտը ուժով ուժով նետել սկսաւ, մազ մը մնացեր էր, մազ մնաց, լեզուդ ալ բռնուէր է, լեզուն բռնուեցաւ, ձեռքերնիդ կը պագնեն, ձեռքէն բան չազատիր, ալկանջող չհասան, աչքն ալ վիրա քեզի էր, չար աչք, մէջքերնին ծռել, երես դարձնէ, բարեւ բռնեց, ի՞նչ կայ չկայ, ճամբու դրին, համ ու հո՞տ պիտի տա՞ն, խօսքէս չեմ դառնար, խօսքի կը բռնենք, օճախը չմարիլը, ճամբայ ելանք, ձայնս բռնել, գրգռեցին ախորժակը, ճամբան կտրեցին, կը թափին վրան, ճամբադ կտրող, նեղու չի գար՛:*

Դուրս մնացած դարձուածքներէն մաս մը առկայ են Պ. Պետիրեանի Հայերէնի Դարձուածքներու Ընդարձակ Բացատրական Բառարան»ին մէջ. ինչպէս՝ *վա՛յ առնողին գլուխին, Խելք չըրինք, խելքը առեր էին, խելքը կը պառկէ՞ր, միտքս հարիւր դի կերթայ, մտքէն անցածը, մտքերնուն չանցընեն, լեզունին անգամ չտկեցին, ժանիքը կախած, ալկանջին ծռեցաւ, մարմինը փուռ-փուռ եղաւ, ծունկերնին կոտրել, քունը բոլորովին ծանրացաւ կոպերուն, խօսք մտիկ չընող, մէկ խօսքը եր-*

---

<sup>5</sup> Ա. Սուքիասեան, Ս. Գալստյան, Հայոց Լեզվի Դարձվածաբանական Բառարան, Ե., Երեւանի համ. հրատ., 1975:

<sup>6</sup> Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Հայոց Լեզվի Դարձվածաբանական Բառարան, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 1975:

*կու չէր ընէր, Կնիկը աղէկ մը կակուղցած էր, հասակին գծերը, վրադ կը խօսէր, ինքզինքս կը զսպեմ, ճամբան կը շտկուի, պարայ պահերուն, անուշութիւննին դուրս հոսեր էին, մէջտեղ կէլլէ, թեթեւ հոգի, ներսիդիս կը մարի<sup>7</sup>:*

Սոյն հետազօտութեան մէջ գործածուած դարձուածքներէն խումբ մը՝ թիւով 13–ը, տեղ չեն գտած վերը նշուած երկու բառարաններուն մէջ. անոնք են՝

1. **բերնի՞ն էր ինկեր** -իրեն վերապահուած՞ էր
2. **կախուած մնաց երիտասարդներուն բերաներէն** -ապշեցաւ,
3. **կնքուած բերանը** –օրհնուած
4. **մազերը տնկուեցան** - զարմացաւ,
5. **լեզունին անգամ չշտկեցին** – լեզուն սրբագրել, ուղղել
6. **մարմինը փուշ-փուշ եղաւ**- սրթսրթաց,
7. **քունը բոլորովին ծանրացաւ կոպերուն** – քունը տարավ,
8. **կնիկը աղէկ մը կակուղցած էր** – հեզ, լսող էր դարձել ,
9. **հասակին գծերը** – տարիքին համապատասխան բնավորություն,
10. **ճամբան կը շտկուի** – ճիշտ ուղու վրա դնել,
11. **անուշութիւննին դուրս հոսեր էին** - քաղցրութիւնը դուրս տուած

---

<sup>7</sup> Պետրոս Սարգսի Բեդիրյան, Հայերեն դարձվածքներու ընդարձակ բացատրական բառարան, Ե., «Երևանի Պետական Համալսարանի Հրատարակչություն», 2011:

12. **հացը կը թաղեն**–մխրճելով ծածկել

13. **ներսիդիս կը մարի**– հոգի տալ

3. Մնձուրիի ստեղծագործութիւնները հարուստ են դարձուածքային միաւորներով՝ նաեւ դեռեւս չվկայուածներով, որոնց ուսումնասիրութիւնը որոշակիօրէն կը հարստացնէ ժամանակակից արեւմտահայերէնի դարձուածքներու կազմը՝ նաեւ բառապաշարը: Հեղինակը գրական ձեւերու հետ միասին չի վարանիր իր ստեղծագործութիւններուն մէջ գործածել ժողովրդախօսակցական, առօրեայ խօսակցական, բարբառային ձեւեր: Այդ անոր ոճն է, իր իւրայատկությունը, որմով շահեկանօրէն կ'առանձնանա իր ժամանակակիցներէն:

#### SUMMARY

#### IDIOM CONNECTION IN H. MNDZURI'S "ARMTAN"

#### CREATION

Tioyan S., Kilerjian B.

We undertook the study of Western Armenian phrases on the basis that the two parts of our people live in different geographical areas and environments, have completely different lifestyles, worldviews, social systems, traditions and customs, which find their direct reflection in phraseology. the same phrase, at least with semantic nuances, is different in Western Armenian and Eastern Armenian. for example They were not things that could be handled with two or three people. for example: **Get in trouble** ((Western Armenian) narrow down, to cause trouble - (Eastern Armenian) to be insufficient compared to desire, demand, aspiration), **pour on**

((Western Armenian) attack - (Eastern Armenian) to gather (on it), to fall, to reach (to help, etc.)).

In addition, as a result of our study, more than a dozen phrases were found, which are not attested in the phraseological dictionaries of one or other languages. for example: hung on the mouths of the youth (surprised), the sealed mouth (blessed), etc.

**Key words.-** vocabulary, stable connections, multifaceted, to reason, original dictionary, semantic usage, structural application, creation.

**РЕЗЮМЕ**  
**ФРАЗЕОЛОГИИ В ПРОИЗВЕДЕНИЯХ МНДЗУРИ**  
**"АРМТАН"**

**Тюян С., Килерджян Б.**

Мы взялись за изучение западноармянских фразеологий исходя из того, что две части нашего народа живут в разных географических территориях и средах, имеют совершенно разные образы жизни, мировоззрения, социальные системы, традиции и обычаи, которые находят свое непосредственное отражение во фразеологии: одна и та же фраза, по крайней мере по со смысловыми оттенками отличается в западноармянском и восточноармянском языках. Например. *երկու-երեք հոգիով գլուխ ելլուելիք բաներ չէին, կը թափին վրան, նեղու չի գար* (дословный перевод: невозможно справиться с помощью двух-трёх человек, навалились на него, в обиду не придет):

Кроме того, в результате нашего исследования выявились более десятка словосочетаний, не засвидетельствованных в фразеологических словарях не в западноармянском и не во

восточноармянском языков, такие как: կախուած մնաց երիտա-  
սարդներուն բերաներէն (ապշեցաւ), կնքուած բերանը (օրհ-  
նված) и тд. дословный перевод: он остался висеть на устах  
молодых (ошеломлен), запечатанный рот (благословен):

**Ключевые слова:** словарный состав, многозначные, устойчи-  
вые словосочетания, рассуждение, словарный первичный  
вариант, семантическое применение, структурное применение,  
произведение

**ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅԱՆ  
ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ  
ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

**Մանուկ Ֆելեքյան**

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

գիտաշխատող

[manukfeleqyan@gmail.com](mailto:manukfeleqyan@gmail.com)

**Բանալի բառեր.** բացատրական բառարաններ, բառերի բացատրության եղանակներ, բառահոդված, բառապաշարի համակարգային կառուցվածք, բացատրությունների միօրինակություն, բառարանային անդրլեզու, բացատրությունների լուսաբանման բնագրային օրինակներ:

**Նախաբան**

Բառապաշարի ուսումնասիրման համար շատ մեծ է լեզվաբանական կամ բանասիրական բառարանների դերը: Բառապաշարի բառաիմաստային համակարգը այս կամ այն չափով ու ճշգրտությամբ ներկայացվում է բացատրական բառարաններում:

Բառարանային բացատրությունը և բառահոդվածը ընդհանուր առմամբ պետք է հնարավորինս սպառիչ տեղեկատվություն տան բառի նշանակության մասին և ցույց տան նրա

տեղը լեզվի բառային համակարգում, նրա իմաստային, նաև բառակազմական կապերը բառային այլ միավորների հետ<sup>1</sup>:

Մենք քննել ենք արևմտահայերենի ամենաստվարածավալ «Հայոց լեզուի նոր բառարանում»<sup>2</sup> տեղ գտած մի բառախմբի, այն է՝ հարաբերական ածականների բացատրության սկզբունքները: Ըստ անհրաժեշտության՝ դիմել ենք արևմտահայերենի նաև այլ բառարանների<sup>3</sup>: Այս բառարաններում ընդունված սկզբունքները համեմատել ենք նաև արդի արևելահայերենի երեք նշանավոր բառարաններում<sup>4</sup> կիրառված բացատրության եղանակների հետ:

### **Բառաքննական դիտարկումներ**

Բացատրական բառարանի նպատակն է բառի իրական բովանդակության բացահայտումը, նշանակությունների և դրանց նրբերանգների որոշումը, բառի՝ խոսքում ունեցած գործածության ցուցադրումը: Այս նպատակով բացատրական բառարաններում հեղինակները գործածում են տարբեր մի-

---

<sup>1</sup> Տե՛ս В.А. Козырев, В. Д. Черняк, Русская лексикография, Москва, 2004, ст. 43.

<sup>2</sup> Հայոց լեզուի նոր բառարան, հտ. առաջին, աշխատասիրեցին՝ Գնել արքեպս. Ճերեճեան, Փարամազ Կ. Տոնիկեան, Պէյրութ, 1992, հտ. երկրորդ, աշխատասիրեց՝ Արտաշէս Տէր Խաչատուրեան, Պէյրութ, 1992:

<sup>3</sup> Պետրոս Վարդ. Ճիզմեճեան, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հտ. I-II, Հալէպ, 1954-1957:

<sup>4</sup> Ստ. Մալխասեանց , Հայերէն բացատրական բառարան, հտ. I-IV, Ե., 1945:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հտ. 1-4, Ե., 1969-1980:

Էդ. Ադայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հտ. 1-2, Ե., 1976:

ջոցներ և եղանակներ, որոնցից հիմնականներն են՝ 1) նկարագրական բացատրությունը. նշվում են բառիմաստի ամենաեական կողմերը, 2) հոմանշային բացատրությունը. բացատրվող բառը համեմատվում, բաղդատվում է այլ՝ իմաստով նույն կամ մոտ բառի (բառերի շարքի) հետ, 3) հղումներով (հղումային) բացատրությունը. հղում է կատարվում այլ՝ գրական լեզվում ավելի հայտնի կամ առավել գործածական համանշանակին կամ էլ այն բառին, որից կազմված է բացատրվող գլխաբառը, 4) բացասական (նաև հականիշների միջոցով) բացատրությունը: Այս եղանակները շատ հաճախ համատեղվում են տարբեր զուգորդումներով (մեծ մասամբ՝ նկարագրականը և հոմանշայինը):

Ինչպես հայտնի է, լեզվի բառապաշարը ունի համակարգային կառուցվածք: Լեզվի ընդհանուր համակարգում բառապաշարը մի ենթահամակարգ է, որի տարրերը, մշտապես ազդելով միմյանց վրա, որոշակի կայուն փոխհարաբերությունների մեջ են: Այդ ենթահամակարգում բառերը կարող են կապված լինել իմաստային ինչ-ինչ հարաբերություններով, ծագումով, կազմությամբ կամ ոճական հատկանիշներով, խոսքիմասային պատկանելությամբ և այլն:

Բառարանագրության համար կարևոր է բառապաշարի թեմատիկ, ձևաիմաստային, կառուցվածքային ընդհանրությունն ունեցող խմբերի միօրինակ բացատրությունների սկզբունքների մշակումը: Մրանով ավելի գիտական հիմքերի վրա կդրվի բառերի մեկնությունը, առավել ճշգրտությամբ կբացահայտվեն բառապաշարի այլևայլ խմբերի մեջ մտնող միավորների միջև եղած իմաստային, բառակազմական և այլ



կապերը, ավելի հստակ կերևա բառապաշարի համակարգայնությունը<sup>5</sup>:

Բառերի բացատրություն եղանակների միասնականացումը բառարանագիտության կարևոր խնդիրներից մեկն է, որն ունի թե՛ տեսական և թե՛ գործնական կարևոր նշանակություն: «Բառարանում անմիօրինակությունից խուսափելու համար բառարանագիրը պետք է աշխատի ոչ թե բառերի այբբենական ցուցակի, այլ խոսքի առանձին մասերի ներսում որոշակի բառախմբերի հետ: Միայն այս ճանապարհով կարելի է հասնել բառիմաստների տարանջատման միասնական սկզբունքի, բացատրությունների միատիպությանը, դարձվածքների և օրինակների մատուցման անհակասականությանը, ոճական բնութագրումների հետևողականությանը և միատեսակությանը<sup>6</sup>»:

Բառի ճշգրիտ և անհակասական բացատրության համար բառարանագիրները նշում են բառարանային նկարագրության հատուկ լեզվի կամ բառարանի անդրլեզվի (մետալեզու, метаязык, metalanguage, métalangage, Metasprache) մշակումը: Սա կնպաստի նմանատիպ բառախմբերի բացատրությունների միօրինակացմանը<sup>7</sup>:

---

<sup>5</sup> Հմմտ. М.И. Фомина, Современный русский язык. Лексика, М., 1990, ст. 17, Н.Ю. Шведова, Однотомный толковый словарь (специфика жанра и некоторые перспективы дальнейшей работы).- Русский язык: Проблемы художественной речи. Лексикология и лексикография. Москва, 1981, ст. 171.

<sup>6</sup> Н. Ю. Шведова, նշվ. աշխ., էջ 171.

<sup>7</sup> Հմմտ. Е.А. Фивейская, Словообразовательные отношения в толковом словаре: проблема разработки типовых дефиниций (на материале семан-

Իհարկե, մեր (նաև օտարալեզու) բառարանագրության մեջ ավանդաբար գերակշռում է բնական լեզուն, սակայն այն բավականաչափ ստանդարտացված է<sup>8</sup>:

Հարաբերական ածականները, ինչպես հայտնի է, առարկաների հատկանիշ են ցույց տալիս միջնորդավորված, այլ առարկաների նկատմամբ ունեցած հարաբերությամբ, և այդ հարաբերությունը հայերենում արտահայտվում է բառակազմական միջոցներով՝ ածանցմամբ և բառաբարդումով<sup>9</sup>: Ինչպես նշում է Ս. Աբրահամյանը, «հարաբերական ածականները միշտ բաղադրյալ են, առավելապես ածանցավոր, ըստ որում նրանց մեջ որոշակիորեն տարբերվում են առարկա և հարաբերություն արտահայտող բաղադրիչները»<sup>10</sup>: Մեր հոդվածում անդրադարձել ենք միայն վերջաձանցավոր ածականներին:

Հայերենի բացատրական ծավալուն բառարաններում հարաբերական ածականները ավանդաբար գրեթե չունեն նկարագրական-տրամաբանական բացատրություն: Այդ բառարաններում, ըստ էության, չեն բացատրվում բաղադրյալ կազմությամբ ածականները, չեն բացահայտվում դրանց ա-

---

тического поля «Музыка»).-Нормативный толковый словарь живого русского языка: теоретические проблемы и практические трудности. – СПб.,2007. – С. 227

<sup>8</sup> Տե՛ս Ю. Д. Апресян, Избранные труды, т.2. Интегральное описание языка и системная лексикография, Москва: Языки русской культуры: Наука. Изд. фирма "Восточная лит.", 1995, с. 260-268.

<sup>9</sup> Հմմտ. Ս. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հտ. Բ, Ե., 1973, էջ 17: Ա. Մարգարյան, Հայոց լեզվի քերականություն. ձևաբանություն, Ե., 2004, էջ 202:

<sup>10</sup> Ս. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Ե., 1981, էջ 166:

ուարկայական իմաստները, կոնկրետ բառային բովանդակությունը, համապատասխանությունը իրենց հիմքում ընկած հասկացությանը: Հարաբերական ածականների բացատրության համար հայերենի բառարաններում ամենից հաճախ գործածվում է հղումային եղանակը: Հղում է կատարվում տվյալ ածականի բառակազմական նախահիմք գոյականին: Այդ ածականների բացատրության համար հիմնականում գործածվում է շատ ընդահանրացված, վերացական մի բանաձև՝ «նախատիպ հիմքում նշված գոյականին հատուկ՝ վերաբերող, այդ գոյականի»: Այս դեպքում բացատրվում է ոչ թե բառի բուն բառային նշանակությունը, այլ միայն պատճառաբանված իմաստը. հղում է կատարվում այն բառին, որից կազմված է բացատրվող գլխաբառը: Երբեմն կարող է ավելացվել որևէ հոմանիշ (հղումային և հոմանշային բացատրությունների զուգակցում), ինչպես՝ **ՀԱՄԵՐԳԱՅԻՆ**, ած. համերգին յատուկ՝ վերաբերեալ [ՀԼՆԲ], **ՀԱՄԵՐԳԱՅԻՆ**, ած. համերգին յատուկ, վերաբերեալ [ՀԲԲ], **ՀԱՄԵՐԳԱՅԻՆ**, ա. համերգի վերաբերող, համերգի հատկացված [ԺՀԼԲԲ]: **ՁՄԵՌՆԱՅԻՆ**, ած. ձմրան յատուկ [ՀԼՆԲ], **ՁՄԵՌՆԱՅԻՆ**, ա. Ձմռանը հատուկ՝ վերաբերող, ձմեռվա, ձմռան [ԺՀԼԲԲ]: **ԱՇՆԱՆԱՅԻՆ**, ած. Աշնան յատուկ, աշնանը պատահող, աշունքուայ [ՀԲԲ], **ԱՇՆԱՆԱՅԻՆ**, ա. Աշնանը պատահող՝ հատուկ, աշնան ժամանակի [ԺՀԼԲԲ], **ԱՇՆԱՆԱՅԻՆ**, ած. Աշնանը հատուկ [ԱՀԲԲ], **ԱՇՆԱՆԱՅԻՆ**, ած. 1. Աշնան յատուկ. 2. Աշնան ժամանակ [ՀԼՆԲ]: **ԲՐԴԵԱՅ**, ած. բուրդով շինուած՝ հիւսուած, բրդեղէն [ՀԼՆԲ]: **ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ**, ած. արտա-

սահմանին յատուկ՝ վերաբերեալ [ՀԼՆԲ]: **ՀՈՒՆՎԱՐՅԱՆ**, ա.  
Հունվարին հատուկ՝ վերաբերող, հունվարի [ԺՀԼԲԲ]:

Բացատրության այս եղանակի գլխավոր (գուցե և միակ) առավելությունը հակիրճությունն է, նաև տեղի խնայողությունը, որը քննարկվող բառարանների հրատարակումների տարիներին բավականին դժվարութեղի պրոբլեմ էր՝ կապված տպագրական գործի այն ժամանակվա զարգացման մակարդակի հետ: Այսպիսի բացատրության հասցեատերը միջին կամ ավելի բարձր լեզվական պատրաստություն ունեցող ընթերցողն է, որը նաև լեզվակիր է: Հայերեն նոր սովորողներին բառի մասին այսպիսի տեղեկատվությունը անբավարար է:

Այս պատճառով է նաև, որ հարաբերական ածականների հղումային բացատրությունը ոչ սակավ դեպքերում զուգակցվում է այլ եղանակների հետ՝ նկարագրական բացատրություն, հոմանիշներ: Ընդ որում, այդպիսի բացատրություններն ավելի հաճախ կիրառվում են բառերի ոչ հիմնական, փոխաբերական նշանակությունների համար, ինչպես՝ **ՋՐԵՂԷՆ**, ած. 1. ջուրէ գոյացած՝ բաղկացած: 2. ջրիկ, ջրալի [ՀԼՆԲ]: **ՀՈՂԱՅԻՆ**, ած. 1. հողին յատուկ՝ վերաբերեալ. 2. որուն նիւթը հող է, հողէ բաղկացած (կոյտ՝ զանգուած՝ խառնուրդ). 3. հողի վրայ ապրող, ցամաքային (ճճի՝ որդ՝ կենդանի) [ՀԼՆԲ]: **ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ**, ած. 1. Ճգնաժամին հատուկ՝ վերաբերող: 2. Տագնապալի, ծանր, վտանգավոր [ԺՀԼԲԲ]: Այս ածականը արևմտահայերենի բառարանում մեկնված է միայն հոմանիշներով՝ **ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ**, ած. օրհասային, օրհասական [ՀԼՆԲ]: Գործածության սահմանափակումներ ու-

նեցող ածականները (հնաբանություններ, բարբառային, բանաստեղծական, դիպվածական բառեր) բացատրված են նկարագրորեն կամ միայն հոմանիշներով, ինչպես՝ **ԱՐՔԵՆԻ**, ած. 2. (*գվռ.*): Հաղթանդամ [ԱՀԲԲ]: **ԾԱՂԿԵՆԻ**, *ա.* (հզվդ.) Ծաղկից՝ ծաղիկներից պատրաստված [ԺՀԼԲԲ]:

Հղումային բացատրության ժամանակ կարևոր է նշել, թե նախահիմք գոյականի ո՛ր նշանակություններին է առնչվում նույնահիմք ածականը, այլապես ընթերցողը կարող է ընկնել թյուրիմացության մեջ: Այսպես, Ակադեմիական բառարանում որսորդական ածականը բացատրված է երեք հոմանիշներով՝ **ՈՐՍՈՐԴԱԿԱՆ**, *ա.* Որսորդի, որսի, որսորդության: *Կային... որսորդական դատարկ փամփուշտներ, զմուռսի կտորներ (ԱԲ):*

Հարաբերական ածականների նկարագրական բացատրությունը հայերենի ընդհանուր բառարաններում սակավադեպ է կիրառվում, ընդ որում՝ այն հաճախ զուգակցվում է հղումային եղանակի հետ, ինչպես՝ **ՍԿՉԲՈՒՆՔԱՅԻՆ**, *ած.* 1. իբրեւ սկզբունք ընդունուող՝ դիտուող. 2. իր սկզբունքներուն հետեւող և զանոնք պաշտպանող. 3. սկզբունքներէ շագող. 4. սկզբունքային բնոյթ կրող [ՀԼՆԲ]:

Հետևելով արևմտահայերենի (ու նաև եվրոպական) բառարանագրության ավանդույթներին և իրենց որդեգրած սկզբունքներին՝ «Հայոց լեզվի նոր բառարանի» հեղինակները բառահոդվածներում ձգտում են տալ գլխաբառի հնարավորինս շատ կիրառություններ, դրանցով կազմված բազմաթիվ բառակապակցություններ, նաև հանրագիտական տեղեկություններ տվյալ բառով արտահայտվող հասկացության մա-

սին: Օրինակ՝ **ՆԻԻԹԵՂԷՆ**, ած. գ. 1. նիւթ շինուած, մարմնաւոր, երկրաւոր, նիւթական, հողեղէն. 2. *արուեստի մէջ՝ արուեստագետին գործածած նիւթական միջոցները լր ներառելիս իր մտածումներն ու զգացումները արտայայտելու համար: Վեց աւագ արուեստներու հիմնական նիւթեղէններն են.*

*Գրականութեան մէջ՝ լեզուն, ժողովրդի մը բառապաշարը;*

*Երաժշտութեան մէջ՝ ջայնանիշները:*

*Նկարչութեան մէջ՝ գիծերն ու գոյները.*

*Ճարտարապետութեան մէջ՝ քարը.*

*Քանդակագործութեան մէջ՝ մարմարը, պղինձը, քարը.*

*Պարարուեստի (պալէ) մէջ՝ մարմնին շարժումները:*

Արևելահայերենի բառարաններից միայն Ս. Մալխասյանի բառարանում է մասամբ գործածված հանրագիտարանային բացատրության մեթոդը:

«Հայոց լեզվի նոր բառարանը» բառերի բացատրության (բոլոր բառերի և ոչ միայն ածականների) մի յուրահատկություն էլ ունի: Հեղինակները ձգտել են բոլոր բառերի բացատրությունների վերջում նշել դրանց հականիշները (միտումը հասկանալի է. նպաստել սփյուռքահայ ընթերցողի բառապաշարի հարստացմանը): Ինչպես իրենք են գրումսախաբանում, «Իւարաքնչիւր բառի բացատրութեան ետին տված ենք իր հականիշը, երբեմն նոյնիսկ այդ բառին զանազան առումներուն հականիշները, ինչ որ նորութիւն է եւ առանձին հմայք

մը կու տայ Բառարանին»<sup>11</sup>: Այս ձգտման մեջ հեղինակները հաճախ հասնում են ծայրահեղության. բառարանում իբրև հականիշներ են նշված, ասենք, այս գույգերը՝ *հայրենի-մայրենի*, *լուսեղէն-հողեղէն*, *լեռնային-ծովային*, գոյականներից՝ *աքղաղ-հաւ*, *աշակերտ-ուսուցիչ* և այլն: Այս բառարանի մեկ այլ առանձնահատկությունն էլ շատ ու շատ բառերի, այդ թվում և ածականների, բացատրության վերջում դրանց ֆրանսերեն համանշանակները բերելն է. **ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ**, **ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ**, ած. գործարանին յատուկ՝ վերաբերեալ (*ֆրնս. organique, որմէ արեւելահայեր ունին օրկանական բառը*):

Եթե հեղինակները որոշել են գլխաբառի լուսաբանման համար անպայման բերել բնագրային օրինակներ (և ոչ թե կազմել սեփական կապակցություններ կամ նախադասություններ), ապա անհրաժեշտ է ընտրել իսկապես դիպուկ և բառի նշանակությունը կամ իմաստային նրբերանգր ճշգրտող նմուշ: Լեզվում գլխաբառի գոյությունը ընդամենը փաստող օրինակները բառի բացատրությանը ոչինչ չեն ավելացնում, այլ միայն ծանրաբեռնում են բառահողվածը: Այսպես, Ակադեմիական բառարանում *օձային* ածականի առաջին, հիմնական նշանակությունը («օձին հատուկ՝ վերաբերող, օձի») լուսբանված է տերյանական հայտնի տողերով՝ *Կա խորհրդավոր մի հրապուրանք Քո շարժումների անխոս գրույցում, Ինչ որ օձային ինքնահիացում*: Այս օրինակը ոչ միայն չի նպաստում գլխաբառի նշանակության բացահայտ-

<sup>11</sup> Հայոց լեզուի նոր բառարան, հտ. առաջին, Պէյրուի, 1992, էջ Դ:

մանը, այլև թյուրիմացության մեջ է գցում ընթերցողին. արդյո՞ք օձ սողունի կարևոր, բնորոշ, ամենագլխավոր առառանձնահատկություններից մեկը ինքնահիացումով զբաղվելն է<sup>12</sup>:

Հարաբերական ածականների առանձնահատկությունն այն է, որ նրանք համատեքստից դուրս չունեն հստակ տարբերակված բառային նշանակություններ: Եվ բառարաններում քիչ չեն դեպքերը, երբ որպես առանձին, ինքնուրույն իմաստներ են ներկայացվում բառերի իրադրական, խոսքային կիրառությունները: Այս դեպքում հարաբերական ածականների ընդհանուր վերաբերական իմաստները կոնկրետանում են բերված բառակապակցությունների մեջ: Ընդ որում, այդ կապակցություններում ոչ միայն ածական-որոշիչն է ցույց տալիս գոյականի հատկանիշը (տվյալ դեպքում ինչին կամ ում վերաբերելը, հատկացումը, պատկանելությունը, ինչից լինելը, ծագումը են), այլև լրացյալի բառային իմաստն է պայմանավորում հարաբերական ածականի ընդհանուր վերաբերական իմաստի կոնկրետ իրացումը: Այսպես, *ջրային* ածականի համար Ակադեմիական բառարանում բերված են չորս երկրորդական նշանակություններ՝ իրենց լուսաբանող օրինակներով. **ՋՐԱՅԻՆ**, *ա.* .... 2. Ջրում ապրող՝ բուսնող: *Ջրային կենդանիներ: Ջրային բույսեր:* 3. Ջրով՝ ջրի վրայով անցնող՝ կատարվող: *Ջրային ճանապարհ:* 4. Ջրում եղած, ջրում

---

<sup>12</sup> Ի դեպ, այդ բառարանում հիմնականում դիպուկ օրինակների կողքին քիչ չեն նաև այսպիսի նմուշները (գոնե կենդանանունների բացատրություններում, տե՛ս, ասե՛նք, *շուն, ուղտ, հավ* բառերի բացատրությունները):



գտնվող: *Մառն ու հանգիստ միշտ կլինի Ազատ կյանքը ջրային (ՀԹ):* 5. Ջրից առաջացած, ջրե: *Ոսկե կաթիլն սկսեց քչքչալ, խոշորանալ և դառնալ ջրային մի խուրճ (ՂԱ):* Էդ. Ադայանը սրանց ավելացնում է ևս վեցը. **ՋՐԱՅԻՆ**, *ած. ....*

4. Ջրի միջոցով շարժման՝ գործողության մեջ դրվող, ջրի էներգիայով աշխատող: *Ջ. տուրբին:* 5. Ջրագնացության՝ նավագնացության հետ կապված, նավագնացության հատուկ: *Ջ. հաղորդակցություն:* 6. Ջրային ուղիներով կատարվող: *Ջ. ճանապարհորդություն՝ զբոսանք: ....* 8. Ջրամատակարարման հատուկ՝ վերաբերող: *Ջ. ցանց:* 9. Ջրում կատարվող՝ տեղի ունեցող՝ անց կացող: *Ջ. կյանք:* 10. Ջրով բաղադրված, ջրի հետ խառնված, ջրի խառնուրդով կազմված: *Ջ. լուծույթ:* Արևմտահայերենի բառարանում այս բառը ներկայացված է ութ նշանակությամբ:

### **Եզրակացություններ**

- Բառապաշարի բառաիմաստային համակարգը այս կամ այն չափով ու ճշգրտությամբ ներկայացված է բացատրական բառարաններում:
- Բառարանային բացատրությունը և բառահոդվածը ընդհանուր առմամբ պետք է հնարավորինս սպառիչ տեղեկատվություն տան բառի նշանակության մասին և ցույց տան նրա տեղը լեզվի բառային համակարգում:
- Հարաբերական ածականների բառարանային բացատրություններում նկատելի է երեք մոտեցում. ա) առավելագույն ընդհանրացման միտում («նախատիպին վերաբերող՝ հատուկ»), բ) վերացական, ընդհանրաց-

ված բացատրության հետագա կոնկրետացում (հղումային բացատրությունից հետո նկարագրական բացատրություն կամ հոմանիշներ), գ) ածականի կոնկրետ նկարագրական-տրամաբանական բացատրություն (բացատրվում է բառով անվանվող հասկացություններ):

- Հարաբերական ածականները համատեքստից դուրս չունեն հստակ տարբերակված բառային նշանակություններ: Եվ բառարաններում քիչ չեն դեպքերը, երբ որպես առանձին, ինքնուրույն իմաստներ են ներկայացվում բառերի իրադրական, խոսքային կիրառությունները:

#### Օգտագործված գրականություն

Աբրահամյան Ս., Ժամանակակից գրական հայերեն, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատարակչություն, Ե., 1981, էջ 166:

Աղայան Էդ. , Արդի հայերենի բացատրական բառարան, հտ. 1-2, Ե., 1976:

Ասատրյան Ս., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հտ. Բ, Երևան, 1973, էջ 17:

Հայոց լեզուի նոր բառարան, հտ. առաջին, աշխատասիրեցին՝ Գնեկ արքեպս. Ճերեճեան, Փարամազ Կ. Տոնիկեան, Պէրրութ, 1992,

Հայոց լեզուի նոր բառարան, հտ. երկրորդ, աշխատասիրեց՝ Արտաշէս Տէր Խաչատուրեան, Պէրրութ, 1992:

Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հտ. I-IV, Երևան, 1945:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հտ. 1-4, Ե., 1969-1980:

Սարգսրյան Ա., Հայոց լեզվի քերականություն. ձևաբանություն, Երևան, 2004, էջ 202:

Պետրոս Վարդ. Ճիզմէճեան, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հտ. I-II, Հալէպ, 1954-1957:

Апресян Ю. Д. Избранные труды, т.2. Интегральное описание языка и системная лексикография – М.: Языки русской культуры: Наука. Изд. фирма "Восточная лит.", 1995, с. 260-268.

Козырев В. А., Черняк В.Д. Русская лексикография, Москва, 2004, ст. 43.

Фивейская, Е. А. Словообразовательные отношения в толковом словаре: проблема разработки типовых дефиниций (на материале семантического поля «Музыка») // Нормативный толковый словарь живого русского языка: теоретические проблемы и практические трудности. – СПб., 2007. – С. 227

Фомина М.И., Современный русский язык. Лексика, М., 1990, ст. 17

Шведова Н. Ю., Однотомный толковый словарь (специфика жанра и некоторые перспективы дальнейшей работы) // Русский язык: Проблемы художественной речи. Лексикология и лексикография. Москва, 1981, ст. 171.

**SUMMERY**  
**INTERPRETATIONS OF RELATIVE ADJECTIVES IN WESTERN**  
**ARMENIAN DICTIONARIES**

**Felekyan Manuk**

The article examines the ways of explaining relative adjectives in Western Armenian dictionaries in comparison with Eastern Armenian explanatory dictionaries. In general, the phrase should provide the most exhaustive information about the meaning of the word and show its place in the lexical system of the language. There are three approaches in dictionary explanations of relative adjectives: a) a tendency towards maximum generalization; b) further specification of the abstract, generalized explanation, c) the specific descriptive-logical explanation of the adjective.

**Key words:** explanatory dictionaries, dictionary articles, types of dictionary interpretations of words, vocabulary as a structured system, uniformity of interpretations, meta-language of interpretations, illustrations in dictionary entries.

**Felekyan Manuk** - Candidate of Philological Sciences, Institute of Language. R. Acharyan NAS RA, researcher.

[manukfeleqyan@gmail.com](mailto:manukfeleqyan@gmail.com)

**РЕЗЮМЕ**  
**СПОСОБЫ ТОЛКОВАНИЙ ОТНОСИТЕЛЬНЫХ**  
**ПРИЛАГАТЕЛЬНЫХ В СЛОВАРЯХ ЗАПАДНОАРМЯНСКОГО**  
**ЯЗЫКА**

**Фелекян Манук**

В статье рассмотрены способы объяснений относительных прилагательных в словарях западноармянского языка в сравнении с толковыми словарями восточноармянского языка. Лексическое объяснение и словарная статья в целом должны дать максимально исчерпывающую информацию о значении слова и показать его место в лексической системе языка. В словарных объяснениях относительных прилагательных заметны три подхода: а) тенденция к максимальному обобщению; б) дальнейшая конкретизация абстрактного, обобщенного объяснения; в) конкретное описательно-логическое объяснение прилагательного.

**Ключевые слова:** толковые словари, словарная статья, типы словарных толкований слов, лексика как система, однотипность толкований, метаязык толкований, иллюстрации в словарных статьях.

**Манук Фелекян** - кандидат филологических наук, Институт языка им. Р. Ачаряна НАН РА, научный сотрудник.

[manukfeleqyan@gmail.com](mailto:manukfeleqyan@gmail.com)

«ՇԱՐԱՀԻՒՍՈՒԹԻՒՆ» ԹԵՄԱՆ  
ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԱԳԻՐՔԵՐՈՒ ՄԷՋ

**Ֆիշենկճեան Անի**  
ՀՀ ԳԱԱ լեզուի ինստիտուտ  
գիտաշխատող  
fishenkjianani@gmail.com

**Բանալի բառեր.** Սփիւռք, արեւմտահայերէնի պահպանութիւն, շարահիւսական կառուցուածք, ուսումնական ձեռնարկ, մեթոտաբանութիւն.

Քերականութեան այն բաժինը, որ կ'ուսումնասիրէ բառերու գործառական կիրառութիւնները, անոնց կապակցութիւնները, նախադասութիւնները, ասոնց կառուցուածքային տիպերը եւ կապը իրարու հետ, կը կոչուի շարահիւսութիւն: Ուրեմն, Շարահիւսութեան հիմնական խնդիրը, լեզուի շարահիւսական միաւորներու եւ պայմանաւորող քերականական յարաբերութիւններու քննութիւնն է:

Շարահիւսութեան մասին Հայրենի լեզուաբաններու, բանասէրներու կողմէ առկայ գիտական յօդուածներն ու մենագրութիւնները առաւելաբար անդրադարձած են զրաբարիկ կամ արեւելահայերէնի շարահիւսութեան. սակաւ ուսումնասիրուած է արեւմտահայերէնի շարահիւսութիւնը: Վարազ Առաքելեանի դիտարկումով «...շատ աւելի անմխիթար է արեւմտահայերէնի զրական լեզուն, որի շարահիւսական դասական կառուցուածքը ցայժմ ուսումնասիրուած չէ եւ սպասում է իր ուսումնասիրողին»<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Տասնապետեան Եղուարդ, «Քերականութիւն», Անթիլիաս, 1990, էջ 241:

Արեւմտահայերէնի Շարահիւսութեան թեմային վերաբերող նիւթերու մենք կը հանդիպինք արեւմտահայերէնի քերականութեան դասագիրքերու մէջ, ուր ուսումնական ձեռնարկներու հեղինակները նկատի ունենալով երկրի պայմանները, դասաւանդուող առարկայի ճշդուած դասաժամերը կը փորձեն տուեալ թեման ներկայացնել պատշաճօրէն, առանց գիտական խորացման, երբեմն ալ առանց յիշելու Շարահիւսութիւն եզրոյթը:

Օրինակ՝ Այտընեանի համաձայն, շարահիւսութիւնը քերականութեան արուեստի հինգ գլխաւոր մասերէն մէկն է, որով մասանց-բանին իրար կը կապէ: Այտընեան շարահիւսութիւն բառի փոխարէն շրջանառութեան մէջ կը դնէ «Խօսքկամ բառերու համաձայնութիւն» եւ կամ «Շարագրութիւն»<sup>2</sup> /167/ արտայայտութիւնները: Ուրեմն, Շարահիւսութիւնը նաեւ կ'ուսումնասիրէ բառերու քերականական պաշտօնն ու յարաբերութիւնը իրարու հետ խօսքին մէջ, այլ խօսքով Շարահիւսութիւնը քերականութեան այն մասն է, որ կը սորվեցնէ, թէ ինչպիսի՞ բաղադրիչ մասերէ եւ ինչպէ՞ս կազմուած է խօսքը կամ նախադասութիւնը:

Արդ, մեր քննութեան գերնպատակը արեւմտահայերէնի շարահիւսութեան դասական կառուցուածքի գիտական ուսումնասիրութիւնը չէ, այլ՝ արեւմտահայերէնի /Սփիւռքի/ դասագիրքերու մէջ «Շարահիւսութիւն» թեմայի առկայութիւնն ու բացակայութիւնը, թեմայի ուսուցումն ու մատուցման եղանակները:

Գաղտնիք չէ, որ արեւմտահայերէնի բոլոր դասագիրքերուն ուղղակի կամ անուղղակի աղբիւրը մեծ մասամբ Հ. Արսէն Այտընեանի Քննական Քերականութիւնն է, արդի հայե-

---

<sup>2</sup> Այտընեան Հ. Արսէն Վ., Քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1883, 167:

րէնի համապարփակ ու խորաթափանց ուսումնասիրութիւնը, որուն տեւապէս դիմած են ու կը դիմեն մեր լեզուն /ե՛ւ արեւմտահայ, ե՛ւ արեւելահայ/ հետազօտողները<sup>3</sup>:

Սակայն Հայր Այտընեանի Քննական Քերականութիւնը մասնագիտական ծաւալուն տարողութեամբ դպրոցական առաջադրութիւններնէն շատ աւելին էր, ուստի դեռ 20-րդ դարու սկիզբը անհրաժեշտ դարձած էր արդի լեզուի դպրոցական ուսուցման ծառայող դպրոցական ձեռնարկներու պատրաստութիւնը: Այդ առաջադրանքը կատարեցին Հ. եւ Չ. Ասատուր ու Յովհաննէս Գազանճեանը, որոնք օգտուելով Այտընեանի երկասիրութենէն կազմեցին իրենց քերականութեան դասագիրքերը<sup>4</sup>, որոնք յետագային կրկին հիմք պիտի ծառայէին վաթսունական թուականներէն ետք պատրաստուած քերականութեան դասագիրքերուն:

1960-ական թուականներէն ետք Շարահիւսութիւն թեման նոյնպէս տեղ գտաւ արեւմտահայերէնի դասգիրքերուն մէջ «Տրամաբանական Լուծում», Խօսք եւ նախադասութիւն եւ այլ եզրոյթներով, այնտեղ ենթաբաժիններով ուսումնասիրուած էին Նախադասութիւնն ու խօսքը, նախադասութեան տեսակները ըստ երանգի, ըստ կազմութեան եւ նախադասութեան անդամներու պաշտօնները եւ այլն:

---

<sup>3</sup> Տասնապետեան Եղուարդ, «Քերականութիւն», Անթիլիաս, 1990, էջ 242-243:

<sup>4</sup> Ասատուր Հրանդ եւ Զապէլ, «Գործնական քերականութիւն արդի աշխարհաբարի», Կ. Պոլիս, 1902; Ասատուր Հրանդ եւ Զապէլ, «Գործնական քերականութիւն արդի աշխարհաբարի», Կ. Պոլիս, 1922: Գազանճեան Յովհաննէս, Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի, միջին դասընթացք, Կ. Պոլիս, 1925:



Շարահիսութեան, որպէս քերականութեան առանձին թեմայ, անդրադարձած են Զարեհ Մելքոնեանը<sup>5</sup>, Մկրտիչ Մկրտիչեանը<sup>6</sup>, Կարապետ Ճուհարեանը՝ 1980-ական թուականներէն ետք Յարութիւն Քիրքճեանը՝ «Նոր քերականութիւն հայերէն լեզուի»<sup>7</sup> դասագիրքին մէջ, Կարօ Առաքելեան իր «Արդի Հայերէնի քերականութիւն»<sup>8</sup> խորագիրով Գ. գիրքին մէջ, համահեղինակներ՝ Կարօ Առաքելեան եւ Աղանի Ֆրստրզճեան «Դիւրին Հայերէն»<sup>9</sup> Ա. եւ Գ. գիրքերու մէջ եւ վերջապէս Յակոբ Չոլաքեանը «Անդաստան»<sup>10</sup> Դ., Ե. գիրքերուն մէջ առաւելաբար: Այս դասագիրքերու մէջ քերականական կարգերու համակարգումը այսպիսին է.

ա Հնչիւնաբանութիւն, ձեւաբանութիւն եւ շարահիսութիւն.

բ. Շարահիսութիւն, հնչիւնաբանութիւն, ձեւաբանութիւն եւ կրկին շարահիսութիւն.

Արդարեւ, ուսումնասիրելով Սփիւռքի արեւմտահայերէնի քերականութեան դասագիրքերը սփիւռքահայ դպրոցներու մէջ ուսուցման թերացումը կ'ընդգրկէ լեզուի բոլոր ուղորտները անխտիր՝ հնչիւնաբանութիւնը, բառագիտութիւնը, ձեւաբանութիւնը, բայց մանաւանդ շարահիսութիւնը. շատ

---

<sup>5</sup> Մելքոնեան Զարեհ, Գործնական քերականութիւն արդի հայերէնի լեզուի, Դ. տպագրութիւն, Պէյրութ, 1972:

<sup>6</sup> Մկրտիչեան Մկրտիչ, Քերականութեան դասեր, Բ. գիրք, (Նախակրթարանի Ե.-Զ. կարգերուն համար), Հալէպ, 1962:

<sup>7</sup> Քիրքճեան Յարութիւն, Նոր քերականութիւն հայերէն լեզուի (Արեւմտահայերէն), (Միջնակարգ բաժնի Ա. տարի), Աթէնք, 1989:

<sup>8</sup> Առաքելեան Կարօ, Արդի հայերէնի քերականութիւն, Գ. գիրք, Պէյրութ, 1998:

<sup>9</sup> Առաքելեան Կարօ, Ֆրստրզճեան Աղանի, Դիւրին հայերէն, Ա. գիրք, ԲԾ մաս, Պէյրութ, 2004; Գ. գիրք, Բ. հրատարակութիւն՝ բարեփոխուած, Պէյրութ, 2010:

<sup>10</sup> Չոլաքեան Յակոբ, Անդաստան, Գ., Հալէպ, 2010:

թերի կ'ուսուցուի շարահիսուսթիւնը, «թող որ զայն ուսուցելու ծառայող որեւէ ձեռնարկ ալ գոյութիւն չունի մեր մէջ», կը գրէ Արմենակ Եղիայեանը: Չհամաձայնելով Եղիայեանի այն գնահատականին, որ շարահիսուսթեան «ձեռնարկ ալ գոյութիւն չունի»: ընդհակառակը ունեցած ենք ուսումնական ձեռնարկ միայն շարահիսուսթեան. մէկ օրինակը մեր տրամադրութեան տակ է. ձեռնարկը կը կոչուի «Քերականութեան դասեր» Գ. գիրք, հեղինակը մտաւորական, վաստակաշատ հայերէնաւանդ ուսուցիչ Մկրտիչ Մկրտիչեանն է. աշխատութիւնը լոյս տեսած է Հալէպ, 1995 թուականին. մեծ հաւանականութեամբ ա՛յս գիրքի երկրորդ կամ երրորդ հրատարակութիւնն է: Գիրքը իր 120 էջերով բարձրագոյն կարգի աշակերտներուն կը մատուցէ շարահիսուսթեան թեմային առնչուող դասեր՝ օրինակներով եւ դասի համապատասխան վարժութիւններով, առանց հրապարակելու օգտագործուած գրականութեան ցանկը: Դժբախտաբար այս ուսումնական ձեռնարկը ծանօթ չէ ոմանց, ծանօթ չէ գիտական հանրութեան եւ աւելին՝ չէ դասաւանդուած Հալէպի կամ Սփիւռքի կրթօճաներէն ներս: 1995թ. փորձ կատարուեցաւ զայն մատուցելու Հալէպի Քարէն Եփփէ Ազգային Ճեմարանի բարձրագոյն կարգի աշակերտներուն, սակայն ձախողութեան մատնուեցաւ:

Մեր ուսումնասիրութեան թեման ընդգրող այլ հիմնահարցեր եւս կ'ուզենք նշել, որոնք նոյնքան առաջնահերթ կը համարենք:

Սփիւռքի համայնքներու կազմաւորման օրերուն հիմնուած կրթական հաստատութիւնները ոչ բոլորը Ազգային վարժարաններ էին, այլ այնտեղ սկսած էին գործել, մասնաւոր, միութենական եւ յարանուանական. Հայերէն լեզուի ուսուցումը կը կատարուէր վարժարաններու պատասխանատուներու կողմէ ներքին ծրագիրի հիման վրայ: Հայերէնի ուսուցման համար միատեսակ ծրագիր եւ դասագիրք գոյութիւն չէ

ունեցած: Վարժարաններու բարձրագոյն բաժիններու մէջ գրականութենէ բացի ոչինչ կը մատուցուէր աշակերտներուն արեւմտահայերէնի շարահիւսութեան քերականական կառուցուածքին առնչուող. ուստի յետագայ լրագրողէն, կամ ուսուցչական պաշտօն վարող տարրական բաժինի հայերէնաւանդ ուսուցիչէն ինչ կրնայինք ակնկալել:

1970-1980-ական թուականներուն Սփիւռք վերադարձան Հայրենիքի Բարձրագոյն հաստատութիւններէն վկայեալ մեր հայրենակիցներ, որոնք ոչ մէկ ճիգ խնայեցին իրենց աշխատանքով, իրենց դասագիրքերով սատար հանդիսանալ արեւմտահայերէնի պահպանման, բայց մնաց թերաւարտ:

Վերջին տարիներուն Հայաստանի մէջ եւս փորձեր կատարուեցան արեւմտահայերէնի կանոնակարգման նպաստող ուսումնական ձեռնարկներու եւ աշխատասիրութիւններու հրատարակութեանց. անոնք առաւելաբար շեշտը դրած էին հնչիւնաբանութեան եւ ձեւաբանութեան վրայ: Այնտեղ շատ քիչ անդրադարձ կար շարահիւսութիւն թեմային վերաբերող.

Ուստի, «Շարահիւսութիւն» թեման արեւմտահայերէնի դասագիրքերու մէջ աշխատանքը խիստ անհրաժեշտ է եւ այժմէական, քանի որ թեմային առնչուող մեր կողմէ կատարուած համակողմանի ուսումնասիրութիւնները հնարաւորութիւն ընձեռեցին առաւել մօտէն ծանօթանալու դասագիրքերու կառուցքուածին, հեղինակի մեթոտաբանութեան, լեզուի ուսուցման եղանակին եւ անոնց կիրառութիւնը առօրեայ բանաւոր եւ գրաւոր լեզուի վրայ:

Հետեւաբար, մեր ուսումնասիրութենէն կարելի է հետեւեալ եզրայանգումը կատարել:

1. Արեւմտահայերէնի պահպանութեան համար ե՛ւ Սփիւքի, ե՛ւ Հայաստանի մէջ յառաջացնել մարմին մը, որու

պարտականութիւնն է գիտականօրէն քննել արեւմտահայերէնի դասագիրքերու կառուցուածքը, ընդգծել թերութիւններն ու առաւելութիւնները եւ հեղինակներու կողմէ չհիմնաւորուած քերականական որոշ երեւոյթները, որոնց քննարկումն ու վերամշակումը կրնայ ուղեցոյց հանդիսանալ առաջին հերթին Սփիւռքի վարժարաններէն ներս դասաւանդող ուսուցիչի, կամ լրագրողին եւ այլ:

2. Վերոնշեալ ուղեցոյցի առկայութեամբ կատարուին քննարկումներ գիտական շրջանակներուն մէջ:

3. Կատարել Արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի շարահիւսութեան զուգադրական քննութիւն:

4. Նախաձեռնել Արեւմտահայերէնի շարահիւսութեան նպաստող ուսումնական ձեռնարկի պատրաստութեան՝ Հայաստանի համալսարաններէն ներս հայրենի ուսանողին համար:

5. Պատրաստել ծրագիրներ, մանկավարժներ, ե՛ւ Սփիւռքի, ե՛ւ Հայաստանի կրթական հաստատութիւններէն ներս արեւմտահայերէնի դասաւանդման համար:

**SUMMERY**  
**«SYNTAX» TOPIC IN WESTERN ARMENIAN**  
**TEXTBOOKS**  
**Fishenkjian Ani**

The topic "Syntax" is very necessary and up-to-date in Western Armenian language textbooks, because it has been little studied by philologists and linguists from a scientific point of view. Therefore, the main goal of our research is to study the presence or absence of the topic "Syntax" in Western Armenian

(or Diaspora in general) textbooks, as well as the ways of teaching and presenting the subject.

Therefore, in order to preserve the Western Armenian language, it is necessary to scientifically study the structure of Western Armenian textbooks, to identify their shortcomings and merits, as well as some grammatical phenomena not substantiated by the authors, the discussion and processing of which can be a guide primarily for teachers in diaspora schools, as well as for journalists and others. .

**Keywords:** Diaspora, preservation of Western Armenian, classical structure, educational manual, methodology.

Fishenkjian Ani, Candidate of History Sciences, Institute of Language after H. Acharyan of the National Academy of NAS RA, Researcher.

**РЕЗЮМЕ**  
**ТЕМА "СИНТАКСИС" В ЗАПАДНОАРМЯНСКИХ**  
**УЧЕБНИКАХ**  
**Фишенкджян Ани**

Тема «Синтаксис» в западноармянских учебниках очень нужна и актуальна, потому что она с научной точки зрения мало изучена лингвистами и языковедами. Следовательно главной целью нашего исследования является изучение наличия или отсутствия темы «Синтаксис» в западноармянских (или вообще Диаспоры) учебниках, а также способы преподавания и подачи предмета.

Поэтому для сохранения западноармянского языка необходимо научное изучение структуры западноармянских

учебников, выявить их недостатки и достоинства, а также не обоснованные авторами некоторые грамматические явления, обсуждение и обработка которых могут быть руководством в первую очередь для преподавателей в школах диаспоры, а также для журналистов и других лиц.

**Ключевые слова:** Диаспора, сохранение западноармянского языка, классическая структура, учебное пособие, методология.

Фишенкджян Ани, кандидат исторических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, научный сотрудник.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Ասոյան Թ.</b> - Շարահյուսական հարցերի իշխանյանական մեկնաբանումներ.....	3
<b>Զաքարյան Հ.</b> - <i>Աթոռ, անթեղ, յոռի</i> եվ մի քանի այլ բառերի ստուգաբանություն.....	14
<b>Միքայելյան Ս.</b> - Հայերենի արաբական փոխառությունների ընդհանուր բնույթը.....	31
<b>Տիոյեան Ս.</b> - Քիլերճեան Պ., Դարձուածային միաւորները Յ. Մնձուրիի «Արմտան» ստեղծագործութեան մէջ.....	42
<b>Ֆելեքյան Մ.</b> - Հարաբերական ածականների բացատրության եղանակները արեւմտահայերենի բառարաններում.....	54
<b>Ֆիշենկճեան Ա.</b> - «Շարահիւսութիւն» թեման արեւմտահայերենի դասագիրքերու մէջ.....	70

ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

(Նվիրվում է հայագետներ Ռաֆայել Իշխանյանի և Աշոտ  
Սուքիասյանի 100-ամյա հոբելյաններին. Երևան,  
հոկտեմբերի 13-14, 2022թ. )

Ձևավորումը և էջադրումը՝  
Մ.Խառատյանի

Կազմը՝ Ս. Արևշատյանի